



Հայոց ցեղասպանությունը



Տեղասպանություն երեւոյթի բնորոշումը

Պրոֆեսոր Ի.Ա. Արաբեան

Տեղասպանության մասին շատ է գրել ու խօսել: Տարատեսակ վեճեր ու մեկնաբանություններ կան, որոնց ելակետը ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ի ցեղասպանություն յանցագործությունը նախագուշացնելու եւ դրա համար պատժելու մասին կոմենցիան եւ 1948թ. դեկտեմբերի 10-ի ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի Մարդու իրաւունքների համընդհանուր ղեկարացիան են:

Տեղասպանությունը ծայրահեղ վայրենի, բարբարոսական գործողությունների ամբողջութիւն է, որ կատարում է ուրեւ ազգային, էթնիկական, ռասայական (ցեղային), կամ կրօնական խումբ լրի կամ մասնակիորէն ոչնչացնելու դիտարութեամբ: Այն մատնանշում է որպէս մարդկութեան դէմ ուղղւած ամենամահաբ յանցագործութիւն: Տեղասպանութեան իրաւաբանական որակումը տրել է շատ աւելի վաղ, քան տեղի են ունեցել Ֆաշիզմի վայրագութիւնները: Այն որակել է լեհ իրաւաբան Ռաֆայէլ Լեմկինի կողմից՝ Արեւելեան եւ Արեւմտեան Հայաստանում հայ բնակչութեան Ֆիզիկական ոչնչացման կապակցութեամբ:

Տեղասպանութիւն հասկացութեան մէջ պէտք է ընդգծել ռասայական, ազգային, էթնիկական կամ կրօնական յատկանիշներով բնակչութեան, առանձին խմբերի բնաջնջելը: Դա կարող է լինել նաեւ խոշոր չափերի, ինչպէս երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Ֆաշիստների գործողություններն էին հրեաների եւ սլաւոնների նկատմամբ: Տեղասպանութիւն կատարողը նպատակ է հետապնդում փոքր ազգերին կամ ազգայնութիւններին բռնութեամբ գրկելու իրենց անկախութիւնը հաստատելու հնարաւորութիւնից, ճնշելով ազգային ազատագրական շարժումները, մարդկայնորէն ապրելու նրա ինքնորոշման իրաւունքը:

Նիւրնբերգի եւ Տոկիոյի զինուորական տրիբունալների կանոնադրութիւնները, ապա նաեւ 1948թ. Կոմենցիան, ցեղասպանութիւն յանցագործութիւնը նախագուշացնելու եւ նման արարքը պատժելու համար, սահմանեցին քրեական պատասխանատուութիւն այն անձանց նկատմամբ, ովքեր կատարում են ցեղասպանութեան բնոյթի յանցագործութիւն՝ անկախ յանցատր սուրբյեկտի հասարակական դիրքից ու պաշտօնից, ինչպէս նաեւ անկախ նրանից՝ կատարել է այն խաղաղ, թէ պատերազմի ժամանակ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում հիտլերեան Գերմանիան մի շարք երկրներում կատարում էր անգլաժային, ծրագրւած ցեղասպանութիւն, որի արդիւնքում ոչնչացւեց 12 միլիոն ռուս, լեհ, չեխ, սլովակ եւ հրեայ: Այսօր նոյնպէս ցեղասպանութիւն է տեղի ունենում աշխարհի տարբեր երկրներում:

Ինչպէս պնդում է իրաւաբան, դոկտոր Ի. Բարսեղովը, այդ յանցակազմի որոշումը անպայմանօրէն սերտօրէն կապւած է հայերի ցեղասպանութեան հետ: Սակայն ոչ անցեալում եւ ոչ էլ վերջերս՝ հայերի բացայայտ ցեղասպանութեան տազանապալից օրերին, ոչ մի քրեական գործ չի

յարուցել, եւ ոչ մէկը ցեղասպանութեան յանցակազմով չի դատաւարուել:

Հայերի ցեղասպանութիւնը օսմանեան կայսրութեան կողմից կատարել է կանխամտածւած, նախապէս մշակւած ծրագրով: Անկախ տարիքից ու սեռից, երկու միլիոն հայեր ոչնչացւել են իրենց պատմական հայրենիքի տարածքի 9/10 մասում, մօտ 800 հազարը ապաստան են գտել աշխարհի տարբեր երկրներում: Դեռ այն օրերին ամբողջ աշխարհը թուրքական կառավարութեան գործողութիւնները որակեց որպէս «ամբողջ մի ազգի՝ հայերի, կանխամտածւած սպանութիւն»: Չպէտք է ուրանալ այն կարեւոր փաստը, որ Ռուսաստանը վճռական դեր խաղաց երեւոյթին յատուկ իրաւաբանական որակում տալու եւ դրա պատժելիութիւնն ընդունելու համար: Նրա արտաքին գործերի նախարարը, հայակական ջարդերի կապակցութեամբ, դեռ 1915թ. ապրիլին Փարիզին եւ Լոնդոնին առաջարկեց հանդէս գալ համատեղ յայտարարութեամբ:

Տեղասպանութիւնը, որպէս պատժելի արարք, սահմանւած է միջազգային Կոմենցիայով, եւ դրա նախագուշացման ակտը ընդունել ու կեանքի է կոչել 1951թ. յունւարի 12-ին: Նախկին ԽՍՀՄ Գերագոյն խորհուրդի կողմից այն հաստատուել է 1954թ. մարտի 18-ին:

Մարդու իրաւունքներին նւիրւած միջազգային փաստաթղթերի ժողովածուի ներածութիւնում Լ. Ն. Շեստակովը, նշելով, որ միջազգային պայմանագրերը վարքի պարտադիր նորմեր են պարունակում, ընդգծում է՝ ցեղասպանութեան հիմնատրման համար որոշիչը քանակային յատկանիշը չէ: Դրա յանցակազմը առկայ է տեւալ ազգի թէկուզ մի քանի ներկայացուցչի սպանութեան պարագայում, եթէ այդ սպանութիւնը կատարել է ազգայնութիւնի ոչնչացման նպատակով:

Նշենք նաեւ, որ Կոմենցիայի երկրորդ յօդուածի համաձայն, այդ յանցագործութիւնը կարող է կատարել նաեւ այլ եղանակով՝ անմիջականօրէն կապւած չլինելով սպանութեան հետ: Օրինակ, ռասայական խտրականութիւնը, տեւալ ազգային մշակոյթի սահմանափակումը, բացառումը կամ իր ազգը գերադասելը, որը նպատակ ունի ոտնահարելու կամ նսեմացնելու այլ ազգութեան պատկանող մարդու իրաւունքները, թոյլ չտալու իրականացնել նրա ազատութիւնը՝ քաղաքական, սոցիալտնտեսական եւ մշակութային, հասարակական կեանքի ու ցանկացած այլ բնագաւառում, անմարդկային վերաբերմունքը, տանջանք պատճառելը, դաժանութիւնը: Ուշագրաւ է, որ միջազգային Կոմենցիան այդ բնոյթի յանցագործութեան նկատմամբ վաղեմութիւնը չի տարածում՝ անկախ անցած ժամանակից, ցեղասպանութիւնը դատել է ենթակալ: Կոմենցիան, սակայն, մեր երկրում երբեք չի կիրառել, որովհետեւ լիակատար, ամբողջական հասկացութեամբ իր տեղը չի գտել գործող քրեական օրէնսգրքի մէջ: Տեղասպանութիւն հասկացութիւնը ծագում է լատիներէնից եւ բացատրում ցեղ եւ սպանութիւն բառակապակցութեամբ ու որակում է որպէս ծանր յանցագործութիւն մարդկութեան դէմ: Յիշատակում է Նիւրնբերգեան դատավարութիւնը, որտեղ սպացուցեցին ցեղասպանութիւնները գերմանական Ֆաշիզմի կողմից, եւ ոճրագործները դատաւարուեցին:

Շար. էջ 7-ում

Իրանահայ Համայնք

Հայերն Իրանում ծանրակշիռ համայնք ունեն Ֆրանսիացի լրագրողի ռեպորտաժը *Սպահանից (10.01.2001)*.- Սպահանի Նոր Ջուղա թաղամասում ապրում է Իրանի ամենակարեւոր համայնքներից մէկը՝ հայկական համայնքը, գրում է ֆրանսիական «Էքսպրես» երկշաբաթեայ հանդէսը «Իրան: Սպահանի փայլը» ռեպորտաժում: Պարսկական հին մայրաքաղաքը համարելով երկրի ամենագեղեցիկ քաղաքներից մէկն իր շքեղ մզկիթներով ու կախարդիչ պալատներով, «Էքսպրեսի» լրագրողն անդրադառնում է նաեւ հայկական Սուրբ Փրկիչ տաճարին:

Իրանական ասանդական գմբեթով տաճարը, որ կառուցել է 1655-ին, ներսից ամբողջութեամբ պատած է որմնանկարներով, պատմում է ֆրանսիական հեղինակատոր պարբերականը: Եկեղեցական համալիրի բակում կայ մի թանգարան, որտեղ ցուցադրում են հայ անտիկ իրեր՝ արծաթեղէն, ազգային հագուստ, գորգեր: Նաեւ հեռուստատեկրանին ցուցադրում են 1915-ի Հայոց ցեղասպանութեան տեսարաններ:

«Էքսպրեսը» յիշատակում է Սպահանի երկրորդ հայկական եկեղեցին եւս՝ նշելով, թէ Սուրբ Փրկչի համեմատ վերջինս առաւել ժամանակակից, փոքր կառոյց է: «Չնայած նախորդ դարերի որոշ հետապընդումներին, գրում է հանդէսը, հայ համայնքի առանձնայատկութիւնները, մասնատրապէս նրա քրիստոնեայ հաւատքը, երաշխատրում են իրլամական հանրապետութեան սահմանադրութեամբ»: Այսբանով հանդերձ Սպահանում այսօր շուրջ 10.000 հայ է ապրում՝ նախկին 30.000-ի փոխարէն:

Թովմասեան եւ Սողոմոնեան դպրոցների աշակերտ-ուհիները երգի ելոյթ ունեցան.- Սոյն թւականի մարտի 9-11-ը Թեհրանի հայոց «Նայիրի» սրահում կազմակերպւել էր մի ձեռնարկ, որում զուգընթաց ելոյթ ունեցան երկու վերոյիշեալ դպրոցների աշակերտները:

Նրանց յամառ աշխատանքը, չնայած բարձր որակ չէր ներկայացնում, սակայն յոյսեր էր ներշնչում: Չեռնարկը կազմակերպել եւ ղեկավարում էր Սողոմոնեան դպրոցի հայոց լեզուի ուսուցիչ՝ Ժորժ Աբրահամեանը: Ժամանակակից լուսագրքն օժանդակում էին «Թովմասեան» դպրոցի տեսչուհի Սաթո Խաչատրեանը եւ «Սողոմոնեան» դպրոցի վերակացու՝ Վրէժ Աբրահամեանը:

Ծրագրի ընթացքում դպրոցի աշակերտ-ուհիներից շատերը մօտեցան մեզ եւ խնդրեցին՝ փոխանցել իրենց շնորհակալական խօսքը՝ ուղղած ձեռնակի կազմակերպիչներին:

Լրագրութիւնը՝ Անի Նազարեանցի

Իրանահայ լուսանկարիչների ցուցահանդէսը Թ.Հ.Հ. Ընդհանուր Միութիւնում.- 2001 թ. մարտի 1-8-ը Թեհրանի Հայ Համալսարանական ընդհանուր Միութեան «Նիկոլ Աղբալեան»-ի անուան սրահում ցուցադրեց իրանահայ լուսանկարիչների աշխատանքները:

Իրանահայ լուսանկարիչները կազմել են «Իրանահայ լուսանկարիչների խումբ», որի հիմնադիր անդամներից են ԲաՖՖի Յովհաննիսեանը, Ռոբերտ Շահբազեանը, Արման Ստեփանեանը եւ Արտուշ Մեդիխանեանը:

Վերոնշեալ ցուցահանդէսում՝ ցուցադրում էր, ԲաՖՖիկ Յովհաննիսեանի (ազատ թեմայով), Սուրեն Ստեփանեանի (բնալուսանկարչութիւն), Անգինէ Գալուստեանի (ազատ թեմայով), Նարեկ Յարութիւնեանի (ազատ թեմայով), Ռազմիկ Ամիրխանեանի (ազատ թեմայով), Կորին Մարգարեանի (ազատ թեմայով), Հանրի Խաչատրեանի (թեման՝ աշխարհաշրջիկութիւն), Արման Ստեփանեանի (թեման՝ «Ջրային կամուրջ»), Օշին Չաքարեանի (թեման՝ աստղագիտութիւն), Հովիկ Մալեանցի (թեման՝ դիմանկարչութիւն), Ռոբերտ Շահբազեանի (թեման՝ բնութիւն) եւ ԲաՖՖի Յովհաննիսեանի (թեման՝ փիլիսոփայութիւն) լուսանկարչութիւնները:

Յատկանշելի է՝ Հովիկ Մալեանցը անդամակցում է միջազգային հանրայայտ Հար-ին իսկ Օշին Չաքարեանի լուսանկարչութիւնները տպագրում են ԱՄՆ-ի աստղագիտական, աշխարհառնչակ Sky and Zelescope եւ Astronomy ամսագրերում:

Լրագրութիւնը՝ Թամիկ Էջեշեանի

ՀՄԱԿ-ի կրտսեր Ֆուտբոլիստները «Դա-

իտ Ֆաջր»-ի մրցութիւնների չեմպիոն.- Սոյն թւականի մարտի 14-ին «Արարատ» մարզականի սրահում կայացաւ, Իրանի Իսլ. յեղափոխութեան 22-րդ տարեդարձին («Դահե Ֆաջր») նիւրած մինի-Ֆուտբոլի եզրափակիչ մրցութիւնները:

Եզրափակիչ փուլում հանդիպեցին Հայ Մարզամշակութային «Արա-



րատ» Կազմակերպութեան թիւ 1 եւ «Հոմա» խմբերը: Խաղի արդիւնքը եղաւ ոչ ոքի՝ 2-2, սակայն հայ մարզիկները նախապէս շրջանաձեւ մրցութիւններում ձեռք բերած միատրների առաւելութեան շնորհիւ կանգնեցին առաջին պատուաւոր պատուանդանի վրայ: «Արարատ» խմբից յետոյ «Հոմա» եւ «Շահիդ- Ֆաջուրի» թիմերը հերթաբար գրաւեցին 2-րդ եւ երրորդ տեղերը:

«Արարատ»-ի խմբի գլխատը մարզիչն էր Մեան Տըր Դուկասեանը, որին օժանդակում էր Ժորժ Ֆ Աւանեսեանը:

Պատասխանատուների շարքում էր փառաբանած մարզիկ «Արարատի»-ի նախկին Ֆուտբոլիստ՝ Կոստան Յարութիւնեանը: Ի դէպ նրա անունի հետ է կապւած իրանահայ Ֆուտբոլի անցնջելի յուշերից մէկը: Արարատի Ֆուտբոլի խումբը նրա օրօք յաղթել էր գրեթէ անձեռնամխելի Փերսպոլիս (Փիրուզի) խմբին: Յաղթական գոլի հեղինակն ինքն էր՝ Կոստան Յարութիւնեանը:

Հանդիպման ներկայ էին Իրանի Ֆուտբոլի Ֆեդերացիայի փոխնախագահ դոկտ. Խաբիրին եւ նոյն կազմակերպութեան ուսումնական կոմիտէի, երիտ. պատանեկան կոմիտէի պատասխանատուներ պրն. Մ.Մոհինի եւ Ա. Խողադաղը:

Ներկաների շարքում էին նաեւ ՖԻՖԱ-ի երկու պատանեկանատուներ, որոնք Իրանի Ֆեդերացիայի իրաւէրով Իրանում էին գտնուում:

«Լոյս»-ը նորանոր յաջողութիւններ է մաղթում հայ Ֆուտբոլիստներին:

Իրան

ԻԻՀ «Յեղափոխության Գա- տարան»-ի պետի՝ Մո- րաշաերիի յայտարարութիւնները կապ- ւած վերջին ձեռքարկութիւնների հետ (Համշահրի օրաթերթ 03.04. 2001).-Պրն Մորաշաերին քղաքակից- ների հետ հանդիպման ժամանակ, տալով՝ 40 հոգու ձեռքարկման լու- րը, յայտարարեց, որ նրանք պատ- կանում են «Ազգային-Կրօնական» կոչւած խմբակցութեանը: Ըստ պրն. Մորաշաերիին՝ նրանք ձեռքարկուել են իրենց անպատասխանատու յայտա- րարութիւնների համար: Նա ձեռքա- կալածների ցանկը չներկայացրեց, միայն յայտնեց, որ նրանցից մի քա- նիսը հաւանաբար շուտով ազատ կարձակեն:

Իրանը կրկին անգամ պատաս- խանեց Միացեալ Իմերթեքների անհիմն պահանջներին (Համշահրի օրաթերթ 08.04.2001).-Մոյն քականի ապրիլի 6-ին Համաշխարհային միջխորհրդարանական նիստում, Ի- րանի խորհրդարանի խօսնակ պրն. Նեզամէպամին մի անգամ եւս ան- հիմն համարելով Միացեալ Իմերթե- քների պահանջները կապւած իրանի երեք կղզիների հետ, յայտարեց. «Ի- րանը բարիացակամութեամբ պատ- րաստ է հարթել բոլոր քիւրիմացու- քիւնները»: Նա ակնարկելով Իրանի երկու բարձրաստիճան պաշտօնեա- ների, Միացեալ Իմերթեքեր այցելու- քեանը, յայտնեց, որ Իրանի Իսլա- մական Խորհրդարանի տեսանկիւ- նից դա լաւագոյն փաստն է իր ասածը հաստատելու համար: Հարկ է նշելու, որ նա միտրդ նիս- տում Միացեալ Իմերթեքների ներկա- յացուցիչը յայտարարել էլ, որ իբրքէ Իրանի սահմանում գտնուող երեք կղզիները պատկանում են, իր եր- կրին:

Խաթամին ցաւ է յայտնել վերջին բախումների համար (Համ- շահրի օրաթերթ 08.04.2001).- Իրանի Իսլամական Հանրապետութեան նա- խագահ պրն. Խաթամին որոշ քերթե- րի եւ անձանց նկատմամբ ցուցաբեր- ւած վերաբերմունքները դատապար- տելով՝ ասաց. «Նկատի առնելով հա- սարակութեան շահը եւ նրանց ապա- հովութիւնը չեն կարող ցաւ յայտ- նել: Ես նկատի առնելով մեր հասա-

րակական կարծիքը, այս բախում- ները մեր կարգերի համար օգտաբեր չեն գտնում»:

Հանրապետութեան նախագահը մատնանշելով որոշ համալսարանա- կանների ձեռքարկումն ասաց. «Հարցը նրանում չէ, որ մեղաորին չպէտք է պատժել, կամ համալսարա- նականը եթէ սխալ գործեց նրան չպէտք է պատժել, այլ նրանում է թէ ով սխալ գործեց պէտք է օրէնքի հա- մաձայն դատել, ոչ բռնութեամբ, սա է ցաւալին»:

Խաթամին յոյս յայտնեց, որ դա- տական մարմնի պետի յատուկ ուշա- դրութեան շնորհիւ այսուհետեւ ա- կանատես չլինենք հակաօրինական ճնշումների գործադրմանը:

Հայաստան

Անտեսում եւ արհամարհում է մայրենին, «Լեզուի պետական տեսչութեան» յայտարարութիւնը.- ՀՀ Լեզուի պետական տեսչութիւնը յայտ- նում է լուրջ մտահոգութիւն, որ վեր- ջին տարիներին էապէս ընկել է զանգւածային լրատամիջոցների (յատկապէս՝ հեռուտարանկերութիւն- ների եւ ռադիօընկերութիւնների) լեզ- ւական մակարդակը: Ամենօրեայ ե- քերում մշտապէս իրենց խաթարւած հայերէնն են հնչեցնում անհրաժեշտ պատրաստածութիւն չունեցող լրա- գրողներ ու ծրագրավարներ: Էլ ա- ւելի մտահոգիչ է այն յանգամանքը, որ զանգւածային լրատամիջոցների ղեկավարներն առ այսօր անտեսում են այս մասին տարիներ շարունակ արտայայտուող դժգոհութիւնները: Հե- տեւանքը եղել է այն, որ մեր պետա- կան լեզուն զանգւածային լրատա- միջոցներում պարզապէս խեղան- դամտւում է: Այս առումով միանգա- մայն անհիմն է լրատամիջոցների ղեկավարների այն ինքնարդարա- ցումը, թէ չկան անհրաժեշտ գրագի- տութեամբ մասնագետներ: Անհնար է հաւատար, թէ չկան այնպիսի «ոտո- յավարներ», որ կարողանան 1-90 քը- ւերն արտասանել ճիշտ, իմանան, որ ճիշտ է ոչ թէ շնհատրելը, այլ շնոր- հատրելը: Ընչու է ընտանեկանը, ոչ թէ ընտանեկանը կամ ընտանե- կականը: Եշմարտութիւնն այն է, որ հայերէնը զանգւածային լրատամի- ջոցներում անտեսւած ու արհա- մարհւած է, եւ լրագրողների առջեւ չի դրուում լեզուական անհրաժեշտ մա-

կարդակ ապահովելու պահանջ, որի մասին երբեմն իրենք՝ լրագրողներն էլ յայտարարում են:

ՆՍՕՏՏ

Գարեգին Բ Ամենայն Հա- յոց Կաթողիկոսի շնորհատրական ուղերձը Անտման տօնի եւ Մայրու- քեան ու գեղեցկութեան օրայ առի- քով (Արմէնայրես 06.04.2001).- Անտ- ման տօնի եւ Մայրութեան ու գեղեց- կութեան օրայ առիքով շնորհատ- րական ուղերձ է յղել ՆՍՕՏՏ Գարե- գին Բ Ա.Հայոց Կաթողիկոսը: Ուղեր- ծում ասում է. «Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մ.Աթոռ Ս. Էջմիա- ծընից Անտման տօնի կապակցու- քեամբ Հայրապետական Մեր օրի- նութիւնն ենք յղում մեր ժողովրդի զաւակներին եւ Մայրութեան ու գե- ղեցկութեան օրայ առիքով շնորհա- տրում բոլոր կանանց: Ի խորոց սրտի Մեր աղօթքն է, որ Տէրը Ամենօրի- նեալ Մուրք Աստուծամօր առաքի- նագարդ հոգու շնորհներով զարդարի եւ մայրութեան բերկրանք պարգեւի ձեզ, սիրելի կանայք, շնորհելով խա- դող կեանքի բարօր ու երջանիկ եր- կար օրեր:

Գեղասահքի երեւանեան բաց ա- ռաջնութեանը կը մասնակցեն 16 երկրների պարային զոյգեր (Ար- մէնայրես 09.04.2001).- Մայիսին Երե- ւան կը ժամանի գեղասահքի՝ Ամերի- կայի Միացեալ Նահանգները ներ- կայացնող պարային մի զոյգ, որը, կը մասնակցի Երեւանում կայանալիք մարզական պարերի բաց առաջնու- քեանը: Առաջնութեանը մասնակցե- լու համար, որը կանցկացուի քրիստո- նութեան 1700-ամեակի միջոցա- տումների շրջանակում, Կ.Դեմիլի- ճեանի անուն մարզահամերգային համալիրում, Երեւան կը ժամանեն պարային զոյգեր եւս 15 երկրներից:

Կը նկարահանի մուլտֆիլմ՝ «Աս- տրաձայնի կատակերգութեան» մօտիւններով (Արմէնայրես 09.04.2001).- «Հայֆիլմ» կինօստուդիայի ռեժիսոր Իւրա Մուրադեանն ու նկարիչ-քեմա- դրոտ Լաիրա Մուրադեանը մուլտ- ֆիլմ են նկարահանելու Դանթի «Աստուծային կատակերգութեան» մօտիւններով: Ի.Մուրադեանի ասե- լով, արդէն պատրաստ է գովազդա- յին ժապաւեմը, որը կը տեղադրուի ին- տերնետային ցանցում՝ նկարահան-

ման համար հովանավորներ գտնելու ակնկալիքով: Վերջերս նրանք նկարահանել են Մեծեր Սկրոլեանի մի քանակ «Այդ ոչինչը ես եմ» վերահագրով ֆիլմը:

ՀՀ վարչապետն ընդունեց Ռուսիայի պաշտպանության նախարարին (ԱրմՆայրես 06.04.2001) ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարեանն ընդունել է Ռուսիայի պաշտպանության նախարար Իռան Միրչային եւ նրա զխատրած պատվիրակությանը: Անդրանիկ Մարգարեանը յոյս է յայտնել, որ Ռուսիան իր ակախի ներգրասածութեամբ կարող է նպաստ կունենայ գործընթացում: ՀՀ վարչապետը բարձր է գնահատել տարածաշրջանում Ռուսիայի հասարակչուած քաղաքականութիւնը եւ ԼՂՀ հակամարտութեան կարգաւորման գործընթացում նրա անկողմնակալ դիրքորոշումը: «Եւ հայերը, եւ ռուսները լաւ գործարարներ են, ու լաւ կը լինէր, որ նրանք գտնեն իրար եւ համագործակցութեան ընդհանուր ուղիներ», -նշել է նախարար Իռան Միրչայն:

Գարեգին Բ կաթողիկոսն ընդունեց Ռուսիայի պաշտպանութեան նախարարին (ԱրմՆայրես 09.04.2001).- Ապրիլի 8-ին ՆՍՕՏՏ Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունել է Ռուսիայի ազգային պաշտպանութեան նախարար Միրչա Պասկուի զխատրած պատվիրակութեանը: Վեհափառ Հայրապետը, ողջունելով հիւրերի այցը հայ ժողովրդի 1700-ամեայ հոգեւոր կենտրոն, իր գոհունակութիւնն է յայտնել հայ եւ ռուսներու եղբայրական ժողովուրդների շարունակուող բարեկամութեան համար, որի արմատները ձգուում են դէպի խոր դարեր: Ընդհանուր կէս տարի առաջ Նորին Սրբութիւնը, իբրեւ Ամենայն Հայոց կաթողիկոս, իր անդրանիկ այցը կատարեց Ռուսիա օրթոդոքս եկեղեցու պետ Թէոկտիստ պատրիարքին: Ռուսիայի նախագահ Էմիլ Կոմստանտինովն ԱՀ Հայրապետին յանձնեց Ռուսիայի ազգային բարձրագոյն պարգեւը՝ «Ռուսիայի աստղ» շքանշանը, ինչը Նորին Սրբութիւնը դիտում է որպէս ռուսահայ համայնքի նկատմամբ Ռուսիայի իշխանութիւնների սիրոյ եւ գնահատանքի արտայայտութիւն: Այս տա-

րի՝ Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակման 1700-ամեակի տօնակատարութեան օրերին, սպասում է նաեւ Թէոկտիստ պատրիարքի այցը Հայաստան:

Հայ-ռուսական յարաբերութիւնները զարգացման մեծ ներուժ ունեն ոչ միայն ռազմական բնագաւառում (ԱրմՆայրես 09.04.2001).- Այսօր ՀՀ պաշտպանութեան նախարար Ս. Մարգարեանը եւ Ռուսիայի ազգային պաշտպանութեան նախարար Մ. Պասկուսն ստորագրեցին երկու երկրների միջեւ ռազմական համագործակցութեան 2001թ. ծրագիրը: Ստորագրման արարողութիւնից յետոյ կայացած ասուլիսի ժամանակ ՀՀ պաշտպանութեան նախարարն իրազեկեց, որ ռուսացի իր պաշտօնակցի ետօրեայ այցի ընթացքում բնարկել են երկկողմ հետաքրքրութիւններ կայացնող բազմաթիւ հարցեր: Նա համոզուող յայտնեց, որ հայ-ռուսական ռազմական համագործակցութիւնը լաւ հեռանկարներ ունի:

Միջազգային

Հակամարտութեան կարգաւորման բանալին Հայաստանի եւ Ադրբեջանի ձեռքում է, յայտարարել է ռուսական կողմը (ԱրմՆայրես 05.04.01).- «Ռուսաստանի համար Կովկասի խաղաղութիւնը նրա կենսական շահերի հարց է», - յայտարարել է ՌԴ առաջին փոխարտգործնա-



խարար, ԱՊՀ-ի երկրներում Ռուսաստանի նախագահի յատուկ ներկայացուցիչ Վ. Տրուբնիկովը: «Դա չափազանց պայթիւնավտանգ եւ թժ շրջան է մեր երկրի հարաւային սահմաններում», - նշել է նա:

Քոլին Փաուել. «Նարաբաղեան հակամարտութեան կարգաւորումը Հարակովկասեան տարածաշրջանի սպազայի բանալին է» (ԱրմՆայրես 04.04.2001).- Ապրիլի 3-ին ԱՄՆ Ֆրիդոլա մահանգի Քի Ռեյսը քաղաքի Հարրի Ս. Թրումենի

սպիտակ տանը Միացեալ Նահանգ-



ների պետքարտուղար Քոլին Փաուելն առանձին հանդիպումներ է ունեցել Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հետ: Ռոբերտ Քոչարեանի հետ զրոյցի ժամանակ ԱՄՆ պետքարտուղարն ընդգծել է Միացեալ Նահանգների պատրաստակամութիւնը եւ շահագրգռութիւնը՝ ըստ ամենայնի աջակցել դարաբաղեան խնդրի խաղաղ կարգաւորման ուղղութեամբ գործադրուող ջանքերին: Հայաստանի նախագահի հետ հանդիպումից յետոյ տեղի է ունեցել Քոլին Փաուելի ճեպագրոյցը: Նա յայտարարել է, որ Քի Ռեյսը նոր պատմութիւն կերտելու հնարաւորութիւն է ստեղծել: Նրա խօսքով, Քի Ռեյսեան բանակցութիւնները հիմնած են Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների երկխօսութեան վրայ:

Գիւմրեցի եւս մէկ գիտնական՝ միջազգային ակադեմիայի անդամ - ՀՀ ԳԱԱ Գիւմրիում գործող երկրաֆիզիկայի եւ ինժեներային սէյսմոլոգիայի ինստիտուտի երկրաշարժաբանութեան լաբորատորիայի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտութիւնների թեկնածու Էդարդ Գեօրգիեանն այս տարւայ փետրուարին ընտրել է Մոսկւայի Երկրի բնապահպանութեան միջազգային ակադեմիայի անդամ:

Վատիկանը Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեանը կը յանձնի Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքներից (ԱրմՆայրես 02.04.2001).- Լիբանանում Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կազմակերպած 1700-ամեակի ձեռնարկների շրջանակներում, մայիսին Վատիկանի կողմից կաթողիկոսութեանը պետք է յանձնի մասունք Ս. Գրիգոր Լուսավորչի նշխարներից: Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնում դարերից ի վեր պահուած է նաեւ Ս. Գրիգոր Լուսավորչի Աջը:■

Առաջինը ցեղասպանությունը դատապարտել է հենց Թուրքիան

Արդեօք մոռացել է, թե՞ դիտաւորեալ ժխտում է

Թուրքական կառավարութեան ոճրագործ, մարդասպան ղեկավարութեան 1914 թւի զաղտնի խորհրդակցութիւններից մէկում դոկտոր Նազըմը հանդէս է գալիս ցինիկ յայտարարութեամբ: Նա ասում էր. «Եթէ 1909թ. մեր Ադանայի եւ այլ վայրերու մէջ կատարել տւածին նման տեղական ջարդերով պիտի գոհանանք, օգուտի տեղ վնաս կը հասնի, այս ժողովրդին մէջ քանիցս խօսած եմ եւ հիմա կը կրկնեմ... պէտք է, որ հայ ազգը արմատախիլ ըլլայ, մեր հողին վրայ անհատ մը անգամ չմնայ, հայ անունը մոռացւի, հիմա պատերազմի մէջ ենք, ասկէ համար առիթ չի գտնուիր, մեծ պետութեանց միջամտութիւնը եւ թերթերու բողոքի ձայնը նկատի, իսկ չէ կրնալ ըլլալ, ըլլալ մոյմիսկ, խնդիրը կատարած իրողութիւն մը կը դառնայ եւ կը փակուի: Այս անգամւան գործողութիւնը բնաջնջումի գործողութիւն մը պիտի ըլլայ, հայերու մէկ անհատ իսկ չի մնալու պայմանով հարկ է»: (Ջ. Կիրակոս-եան-«Առաջին համաշխարհային պատերազմը եւ արեւմտահայութիւնը», մէջբերում Մելան Ջադէ ՌիՖար, էջ 160 «Օսմանեանի յեղափոխութեան մուր ծալքերը», 1936 թ., Բէյրութ):

Ցեղասպանութիւնը կատարածելուց յետոյ թուրքական ռազմական դատարանը Նիւրնբերգեան դատավարութեան նման 1919-20 թթ. քննելով 1915թ. իրադարձութիւնները, մահապատժի դատապարտեց եօթ ղեկավար հանցագործների, մէկն էլ (միւսները փախուստի մէջ էին) կախաղան բարձրացրեց Ստամբուլի հրապարակում թուրք ժողովրդի աչքի առաջ: Թուրքական դատարանի որոշումը այնուհետեւ ի կատար ածեց հայ յայտնի վրիժառուների կողմից Բեռլինում, Թիֆլիսում եւ Միջին Ասիայում:

Ակնյայտ փաստը հաստատեց եւ շարունակեց նաեւ երկրորդ աշխարհամարտում Ֆաշիզմի պարագլուխ Հիտլերը, եւ այսքանից յետոյ Թուրքիայի հիստորիկ պահածքը, նրա բազմերանգ սպառնալիքները ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իտալիայի եւ այլոց պաշտամետների, ժողովուրդների հասցէին «հասկանալի» արդիւնք են տալիս, բայց մի՞թէ աշխարհի հանրութիւնը կորցնելով իր մարդկային դէմքը պիտի հպատակուի դրան:

Այսքանից յետոյ մի՞թէ ժողովուրդները մոռանում են ոչ միայն թուրքերի, այլեւ նրանց նմանների կատարած ոճրագործութիւնները ոչ միայն 1914-23թթ. ցեղասպանութիւնը, այլ տասնիններորդ նաեւ քսաներորդ դարի վերջին կայացած փաստերը:

Ահաասիկ, միայն մէկ փաստ. իմ մայրը ծնել է Էրբեջում 1896 (Շահումեանի շրջան, ԼՂՀ), նրա ծնունդից յետոյ կովկասեան թաթարները (այսինքն ներկայիս ա-

զերիները, թուրքերի հարազատ ցեղակիցները) միջազգային ընդհարումների ժամանակ ոչնչացրել են հայ ազգի ծնողներին, եւ նա իր ծնողներին չէր յիշում:

Ես ծնել եմ Կադաւանում 1914 թ. (Կարսի նահանգ. Թուրքիա), 2 անգամ գաղթել ենք թուրքական եաթաղանից փրկելով, սակայն 1918թ. խառնաշփոթ (յանկարծակի յարձակումից) գաղթի ժամանակ թուրքերը մորթեցին տատիկիս եւ հորաքրոջս, իսկ մենք ցրւած փախչելով, իրար գտանք Կովկասի տարրեր քաղաքներում:

Չհաշւած Խորհրդային ժամանակաշրջանի հայ ազգի հետ անբարոյական, անյարգի վերաբերմունքին իշխանութիւնների կողմից (Նախիջեւանի, Ղարաբաղի օտարացումը, հայերի դիսկրիմինացիան Ադրբեջանում եւ այլն), հետխորհրդային, դարի վերջին տասնամեակում ի՞նչ կատարեց, նոյն ցեղասպանութիւնը թուրք ազգի կողմից, իրենց աւագ եղբայրների աւելի կատարելագործւած սցենարով Ադրբեջանի տարածքում (Մումգայիթ, Գանձակ, Բաքու եւ այլուր): Այստեղ նոյնպէս Էրբեջում (Շահումեանի շրջան) իմ մոր հարազատների բնաջնջում: Ահա այսպէս, յայտնի ձեռագիրը շարունակւում է յաճում թուրանի գլխատը ծրագրի իրականացման:

Ապշեցուցիչ է նաեւ, թէ ինչպէս Ալիեւը Խոջալուի իրենց կողմից կազմակերպւած իրայինների ջարդը ցինիկաբար հրամանով ձեւակերպում է որպէս հայերի կողմից ցեղասպանութիւն, յայտարարելով սգի օր, այն, որ չորս-հարիւր հազար հայերի Բաքում, Մումգայիթում եւ այլուր փաստացի կոտորեցին եւ մի քանի օրում տիրացան նը-քանց ողջ ունեցւածքին, դուրս շարտելով «իրենց» երկը-րից, դրա որակումը ոչ ոք չտուեց, նոյնիսկ մեր հարազատ իշխանութիւնները:

Համայն աշխարհի շատ պետութիւններ հասկանալով ցեղասպանութիւնը որպէս դատապարտութիւն, ոճ-րագործութիւն մարդկութեան հանդէպ, իրեն դատապարտում են, որը դուր չի գալիս հեղինակներին (յատ-կապէս թուրքերին, ազերիին) եւ կըշտամբում են տուժած ազգերին, ու-նելի՞ն մեղադրում եւ վերագրում են, իբր նրանք են կազմակերպել ցեղասպանութիւնը (Էրզրումի, Վանի, Խոջալուի դէպքերը):

Մենք հաւատում ենք, որ վաղ թէ ուշ ցեղասպանութեան հարցը մտնելու է աշխարհի բոլոր երկրների խորհրդարանները եւ արժանույն դատապարտելու է:

Յատկանշանակ է, որ թուրքական աղէտային, խորամանկ դիւստրապիտութիւնը փոխելով յարձակման տակտիկան, ցանկանում է սակարկել նրա պատմական նշանակութիւնը, նրա իսկական եղելութեան կարածքը:

Մի՞թէ նրանք մոռանում են 1919-20թթ. իրենց զինուորական դատարանի «Նիւրնբերգեան» տարբերակի դատավարութիւնը:

Յատկապէս 1951-20թթ. ցեղասպանութեան փաստը արքիման է, դա հաստատւած է ոչ միայն աշխարհի միանձնեայ գերիզօր տէրութեան պետական ներկայացուցիչ ակադեմիաների կողմից: Ապացոյց. ահա մի հատուած Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի



Հասարակական

յօղածից «Աւելի քան երկու միլիոն մարդ տեղահանւեցին:

Ցեղասպանութեան վերապրողների յուշերից

Խարբերողի Աճեմեան Հայկազի Պատմածը (ծնւ. 1892 թ.)

1915 թականի կոտորածի ժամանակ թուրք կառավարութիւնը մեր գիտի բոլոր տղամարդկանց հաւաքեց, բոլորին կոտորեց, հարիւր քսանհինգ հոգի տարան կապեցին, Եփրատ գետը նետեցին, սպանեցին: Երկու օր յետոյ մեզ աքսորեցին: Քշեցին Հալէպ, Էնտեղից Դէր Ջօր: Սպանեցին բոլորի՛ն՝ հօրաքոյրներին, քեռիներին, բոլորի՛ն (մեր գիւղը Աշւանը (Արշամաւան) Եփրատի ափին էր: Ես լողացի, անցայ գետի միւս ափը, փախայ Դերսիւմ, ուր գուտ քուրդեր էին: Մնացի նրանց մօտ: Դերսիւմ մնացի մէկ տարի:

Դերսիւմը ապստամբ էր: Թուրքերը չէին կարող Դերսիւմ մտնել: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ դերսիւմցիներին գորակոչեցին, բայց նրանք չկուեցին. զենքերն ստացան, գնացին իրենց տները: Այնպէս որ նրանք միշտ զինւած էին:

Դերսիւմ անունը հայ քահանայի՝ Տէր Միմոնի անունից էր եղել: Նա գաղտնի քրիստոնէութիւն էր քարոզում բռնի հաւատաւիտիս դարձածների մէջ: Նրանք հացի վրայ խաչ էին անում. իսկ Սուրբ Սարգիսին Օրիան էին ասում՝ Խղդըր Սուրբ Սարգիս: Ձէյա գիւղում քրդերը շատ լաւ պահում էին հայկական եկեղեցին, քանի որ գիտէին, որ դա իրենց նախնիներն են կառուցել: Նրանք խոստովանում էին, որ իրենց պապերը հայ են եղել, բայց ստիպողաբար հաւատաւիտիս են արել՝ մահմեդականութիւն ընդունել: Այդ Սուրբ Սարգիս եկեղեցիի կառավարիչը կին էր: Մի օր եկել էր ժամի հախը հաւաքելու, ինձ ասաց.- Արի՛, ես քեզ պահեմ վարդի պէս:

Ես գնացի մի քանի օր մնացի, բայց յետոյ փախայ, քանի որ ամէն օր ոստիկան էր գալիս հարցնում.- Քո մօտ փախստական հայ կա՞յ:

Կինը ըսաւ.- Անտառներում լիքը փախստական հայ կայ, գնացէ՛ք բռնեցէ՛ք:

Այդ կինը օգնեց, որ ես անտառներով փախայ, քուրդ առաջնորդների հետ անցայ սահմանը՝ Երզրնկա, որն արդէն ցարական զօրքերը գրաւել էին, այդպէս ազատեցի: Յետոյ անցայ Էրզրում, որտեղ Անդրանիկի զինուորը դարձայ: Ես Անդրանիկ փաշայի հետ 1917 թից կուել եմ: Անդրանիկը եկաւ Էրզրում, մենք իրեն դիմաւորեցինք: Մինչեւ 1920 թ. օգոստոսի վերջը եղել եմ նրա հետ: 1917 թ., երբ Էրզրում եկաւ, կուեց թուրքին դէմ, գրաւեց Էրզրումը, առաջացաւ, եկաւ գրաւեց Սարիղամիշը, մի տարի մնաց հոն, եկաւ Ալեքսանդրապոլի ալ գրաւեց:

Անդրանիկի բանակը գուտ հայերից էր կազմւած՝ թով չորս հազար հինգ հարիւր հոգի, ունէր թնդանօթ եւ թէ հրացան: Անդրանիկը, ձին նստած, մեզ ասում էր.- Մի՛ լռէք, երգեցէ՛ք, մենք ալ երգում էինք,

Հերոս մռնչաց, սուլթան դողողաց,
Վիլիելմի աչքից արտասուք ցողաց,
Սուրդ թշնամու կրծքին շողողաց՝

Կովի սիրահար, հերոս Անդրանի՛կ:

Էդ ժամանակ դաշնակցական կառավարութիւնն էր



իշխում:

Անդրանիկն ասաց.- Թուրքական կառավարութիւնը մեռած կառավարութիւն է: Նրա զօրքը քիչ է ու յոգնած, ընդամենը երկու հազար զինուոր հազար կունենայ: Ես չորս հազար ունեմ, երկու հազար ալ դուք կուտաք, միասին կը կուենք, թուրքերուն կը վռնդենք մեր երկրից:

Դաշնակցականները չլսեցին Անդրանիկին: Անդրանիկը անոնց «խարդա՛խ» ըսաւ եւ հեռացաւ: Արդէն Անդրանիկին չէին սիրում: Անդրանիկը պատրոն էր ուզում, դաշնակցականները հաց էին դրկում, հաց էր ուզում՝ պատրոն էին դրկում: Նրանք ուզում էին Անդրանիկին մէջտեղից հանել:

Թուրքերն առաջացան, մենք տեղափոխեցինք Դուկասեանի շրջան, Դարադաշով իջանք Ջալալօղլի (հիմա՝ Մտեփանաւան): Այնտեղ Մոսկովսկի որբանոց կար՝ մօտ երեք հազար որբով: Անդրանիկ փաշան հրամայեց որբերին փոխադրել Թիֆլիզ: Մենք էլանք գացինք Տեղ գիւղը, յետոյ՝ Դիլիջան:

Անդրանիկ փաշան ըսաւ.- Մենք դաշնակների հետ եօլայ չե՛նք գնալ, հարկատր է հեռանալ:

Որոշեցինք հեռանալ Պարսկաստան, Ջուլֆայի կամուրջով անցանք մինչեւ Խոյ: Արդէն գաղթականութիւն կար մեզի հետ, մեր բանակի հետեւից մօտ երեսուն հազար հայ էր գալիս: Թուրքերը թնդանօթ կապեցին գաղթական ժողովրդի վրայ, ժողովուրդը նահանջեց: Եկանք Ջուլֆա, իջանք Դափան, Գորիս: Մի տարի Էնտեղ մնացինք: Էնտեղ եղած ժամանակներս օսմանեան թուրքերը Ալեքսանդրապոլը գրաւել էին, Դիլիջանով գնացել էին Բաքու: Թուրքերը Գորիս՝ Անդրանիկի մօտ դրկեցին մի հայ վարդապետ եւ երկու թուրք, որից յետոյ թուրքերը տեցին հրամանի թուրք. «Գորիսի շոշը խճուղին, մերն է, դու Գորիսով, Լեռնային Դարաքաղից գնացել ես Ջուլֆա, դու մեր ճանապարհի վրայ նստել ես ու խանգարում ես մեզ, անձնատու՛ր եղիր. մենք քեզ չենք սպանի եւ կամ՝ հեռացի՛ր»:

Անդրանիկ փաշան պատասխանեց. «Վաղը առաւօտ յարձակուում եմ ձեզ վրայ: Ես ո՛չ մի շոշ չեմ տայ ձեզ: Դուք եւ կողմերը գո՛րծ չունէք»:

Ութ-տասը օր յետոյ անգլիացին եկաւ: Մի անգլիացի կապիտան Անդրանիկ փաշայի բանակին միացաւ: Մեր բանակը Գորիսից եկաւ Էջմիածին: Երեսանի վերելէն փայտէ կամուրջով առանց Երեսան մտնելու Էջմիածին գնացինք, զենքերը կաթողիկոսին յանձնեցինք: Անդրանի-

Հասարակական

կը Էջմիածնում մեզ «Ազատական» տեղ, այնուհետ գրած էր՝ էսքան ժամանակ կուել է մօտս:

Յետոյ Անդրանիկը գնաց: Երեսան գալու ժամանակ, դաշնակ կառավարութիւնը հաւաքեց Անդրանիկի գօրքը, սպանեց երկու հոգու եւ վիրատրեց շատերին:

Անգլիական գօրքը գրաւել էր Երեսանը: Անդրանիկը ըսաւ.- Էդ շան թուլա Դրոյին տւէք ինձ, ես ականջները կտրեմ:

Պրոֆեսոր Թեմքեչեան մը կար, հարցուց ինձի.- Ի՞նչ եղաւ:

-Անդրանիկին ուզում էին սպանել:

-Վա՛՛, շան որդիներ, հազար տարին մէկ էդպէս մարդ կը ծնի...

Անդրանիկից յետոյ, դաշնակցականները մեզ աշխատանք չէին տալիս: Մեզ փողոց մաքրել տւին, մեզանից մէկին սպանեցին: Մեզ չէին սիրում, որովհետեւ Անդրանիկի զինուոր էինք եղել: Նորից փախանք Ապարան, քարշ եկանք, մինչեւ բոլշեիկեան բանակը եկաւ Ալեքսանդրապոլը գրաւեց: ■

Առաջինը ... Շար. էջ 5-ից

Կարգն ամենուրեք համարեա նոյնն էր. հայերին՝ տղամարդկանց, կանանց, երեխաներին հաւաքում էին շուկայում, ապա ամրակազմ տղամարդկանց քշում էին, սպանում կրակելով կամ մահակներով սառնասրտօրէն ծեծելով: Թաղման կարիք անգամ չէր զգացում: Մնացածներին՝ կանանց երեխաներին յաճախակի ծեծի, թալանի ենթարկելով, քշում էին առանց ուտելիքի, առանց ջրի ու սպաստանի Հալէպի անապատները, դէպի մահ»:

Ապա նա եզրակացնում է, «Եթէ Ամերիկան երբեւէ ներելու է նման յանցանքները, ապա նա էլ մեղսակից դառնալու կատարած ոճրին»:

Նոյնիսկ պրեզիդենտ Թեոդոր Ռուզվելտը նոյն տեսակէտն է արտայայտել, պահանջելով Թուրքիայի դէմ պատերազմ յայտարարել կոտորածների առթիւ (մէջբերում Պոլ Գրինբերգ «Մոված հայերը», «Վաշինգտոն քայմն», 5 նոյեմբերի 2000թ.):

Այս բոլորից յետոյ ինչ կը պատասխանի ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատի խօսնակ Հասթերը, երբ պրեզիդենտ Էլիթթոնի հրամանին պատիւ տալով, մի հարուածով օրակարգից հանեց փաստացի ընդունած դատապարտող բանաձեւը, կազմած իրենց հայրենակից ազնիւ դիւանագետների եզրակացութեան հիման վրայ:

Մեզ թում է, որ թուրքական ցեղասպանութիւնից պատահմամբ կենդանի մնացած, բազմամիլիոն ժառանգները, որոնք գոյութեան պայքար են մղում մուրրակով սփռուած բոլոր մայրցամաքներում, կարօտով յիշելով իրենց հայրենիքը, չեն երագում՝ թուրքերի հետ ճշտելու ցեղասպանութեան եղելութիւնը, դա արքայի մահ, վկայ՝ հնադարեան, հայկական մայրաքաղաքների արեւակները, բազմաթիւ յուշարձաններ եւ ազնիւ մարդկային պատմութիւնը: Նրանք սպասում են, որ թուրքերը, ինչպէս նաեւ նրանց ցեղակից ազերիները վերջիվերջոյ խելքի կը գան եւ իրօք, որպէս արդէն քաղաքակիրթ ժողովուրդներ, կը քննարկեն ցեղասպանութեան հետեւանքների վերացման ու կրած կորուստների փոխհատուցման խնդիրները: ■

Ալեքսանդր Գրիգորեան

Հայոց Տեղ... Շար.

Պատժելի են համարում ցեղասպանութեան կազմակերպումը, դաւադրութիւնը, հը-րահրումը եւ օժանդակութիւնը: Ուշագրան այն է, որ ցեղասպանութեան դէմ Կոն-ւենցիայի պահանջը պարտադիր կերպով տարածում է ինչպէս Կոնւենցիան ստորագրած, այնպէս էլ նրանց յարող պետութիւնների վրայ:



Ցեղասպանների նկատմամբ Կոնւենցիան ունի նաեւ հետադարձ ուժ, այսինքն վաղեմութեան ժամկետը չի տարածում ցեղասպանութիւն գործողների վրայ, մեղատրեքը պատասխանատուութիւն պէտք է կրեն ինչպէս անցեալ, այնպէս էլ ներկայում կատարած ցեղասպանութեան համար: Միջազգային պայմանագրերը վարքի պարտադիր նորմեր են պարունակում: Ցեղասպանութիւն հասկացութեան հիմնադրման համար որոշիչը, ինչպէս ասեց, քանակային յատկանիշը չէ: Ինչպէս մշտեց, ցեղասպանութեան յանցակազմը առկայ է, եթէ կատարել է ազգային խմբի թէկուզ մի քանի ներկայացուցիչների սպանութիւն՝ այդ ազգայնի նշնչացման նպատակով: Այստեղից հետեւում է, որ Մուսոլայիթի, Կիրովարադի, Բարքի ոճրագործութիւնները եւ այլն, որոնք կատարել են զոհերի նկատմամբ՝ միայն հայ ազգին պատկանելու շարժառիթով, բացարձակօրէն եւ անվիճելիօրէն պարունակում են ցեղասպանութեան յանցակազմ: Իրաւաբանական հանրագիտական բառարանում յտակօրէն ասուած է, որ ցեղասպանութիւնը շատ անելի լայն հասկացութիւն է: Այն իր բնոյթով միջազգային յանցագործութեան տեսակ է եւ ընդգրկում է ոչ միայն տեալ ցեղային պատկանելութեան շարժառիթով սպանութիւնը, այլեւ մարմնական վնասածք պատճառները, դիտարեւել կենցիկի այնպիսի պայմաններ ստեղծելը (օրինակ շրջափակումը), որոնք նպատակամղած են տեալ ազգային խմբի լրիւ կամ մասնակի ոչնչացմանը, ծննդաբերութեան խախտմանը կամ մահացմանը: Ցեղասպանութեան շարքին են դասում լեզուի, կրօնի եւ մշակութի ոչնչացումը, դպրոցներում կամ կենցաղում ազգային լեզուի օգտուել, տեալ ազգի լեզուով գրականութիւն տպել եւ տարածել արգելելը, գրադարանների, թանգարանների, դպրոցների, պատմական-մշակութային յուշարձանների, կրօնական ծիսակատարութեան շէնքերի ոչնչացումը եւ այլն, որի համար նախատեսուած է միջազգային քրեական պատասխանատուութիւն:

Մինչեւ հիմա, ինչպէս միջազգային մասշտաբով, այնպէս էլ Հայաստանի օրէնդրութեան մէջ ցեղասպանութիւնն իր յանցակազմի եւ պատժելիութեան բաղադրիչ նկարագրական մասերով դեռ չի ընդունել: Այն կարիք ունի լուրջ մշակման եւ որպէս օրէնք կենցիկի կոչելու, որովհետեւ ցեղասպանութիւնն իրեն զգացնել է տալիս: Մինչդեռ ՄԱԿ-ը չի շտապում ցեղասպանութեան յանցակազմի տարրերը ճշգրտելու, կոնկրետացած պատժաչափեր սահմանելու, եւ դրանք կիրառելու համար միջազգային քրեական դատարան ստեղծելու, որը պէտք է գործի եւ ցեղասպանութեան ամէն մի դէպք քննութեան առնի ու պատժի յանցատուր ոճրագործներին: ■

Հասարակական

Բաց նամակ Թեհրանի Թեմի 11-րդ նստաշրջանի Պատգամաւորական ժողովի յարգելի ատենապետ Դոկտ. Չարսիկ Դաւթեանին,



Յարգելի Դոկտոր,
Պատգամաւորական ժողովի 12-րդ նստաշրջանի պաշտօնական ընտրութիւնները պատճառ դարձան, որ իրանահայ կեանքը լճացած էր անտարբերութեան ծովի մէջ մխրճած զանազան խաւերը արթնանալով, իրենց մէջ հետաքրքրութիւն ստեղծի, ազգային-եկեղեցական հաստատութիւնների գործունէութեան շուրջ մտածելու եւ նըշանակովի մարմինների գործած սխալների եւ դրանց պատճառների շուրջ խորհելու:

Այս հարցերը կապուած են նախկին 15-20 տարիներում գործած ապօրինութիւններին եւ խմբակցական եւ անհատական շահերի վրայ հիմնուած գործելակերպին: Դրանց շարքին կարելի է յիշատակել Հայաստանի Երկրաշարժի անունով եւ «շտապ օգնութիւն» անունով հանգանակուած եւ նպատակին չյատկացուած գումարներին, կրտակներին եւ կտակուած շէնքերի եւ դպրոցական կառոյցների վաճառման, զանազան անուններով հաստատուած հիմնադրամներին եւ մի շարք բազմազան խնդիրներին, որոնք պատկան մարմինների ոչ թափանցիկ աշխատանքի բերումով, կասկածելի ասեկօսների պատճառ դառնալով, իրանահայութեան մէջ ստեղծել են վատատեսութեան մէկ հոսանք, որի արդիւնքում հիասքափուած հայութիւնից, օրայ ճաշակին եւ մոդային համապատասխան ստեղծուած կասկածելի մեթոդներից փախուտու տալու համար վերջացում է արտագաղթի ամօթալի շարժումով:

Յարգելի Դոկտոր, Ձեր տւած բացատրութիւնները մանուկի միջոցով չեն բարարարում ժողովրդին, որովհետեւ հիմնաւորուած չեն եւ շատ էլ չեն կապուած իրականութեան: Աւելի բացատրելու համար մի շարք օրինակներ կարող եմ բերել եւ ջրել այն բոլոր պատճառաբանութիւնները որոնք դուք մատնանշել էք Ձեր յօդուածներում:-

1. Երկրաշարժի «շտապօրին» օգնութիւնը հանգանակուել է աներակների մէջ ծարած դժբախտների ժամանակաւոր ախտերը հոգալու համար, ինչպէս իւրաքանչիւր ընտանիքին մէկ վրան, տաք հագուստ, ջեռուցման սկզբնական միջոց, սնունդ եւ ուտելիք, դեղորայք եւ անճար մարդկանց դրամական չնչին օգնութիւն: Մինչդեռ Ձեր պատճառաբանութիւնները այն տպաւորութիւնն են տալիս, որ նախնական այդ գումարներով Թեմական իշխանութիւնները պիտի վերակառուցէին Գիւմրին կամ Մայիտակ քաղաքները եւ 12 տարի մտածելուց յետոյ փոխել են որոշումը այս անգամ Միւնիքում մտադրել են կառուցել ծորակաշինութեան գործարան եւ այդ նպատակով «շտապօրին» օգնութեան» նպատակով հանգանակուած գումարները ծախսել են սեփականաշնորհման, գործարանի կիսաւեր սրահի նորոգութեան, Իտալիայում գնուած մեքենաների, Հայաստանում գնուելիք ապրանքների (որ մինչեւ օրս դեռ չեն գտնուել), ռոճիկներին (ն՞րոնց), Իրանում գրւած ապրանքներին եւ զանազան ծախսերի եւ յետոյ արդիւնքը եղել է այն, որ բացի մի շարք փայտե արկղներից որոնք փակ վիճակում լեցուած է մէկ կիսանորոգ սրահանման վայրում իր պահակ դռնապանի հետ: Գործարանը իր որոշ մասերը պակաս լինելով հնարարու չի եղել տեղադրել եւ ամբողջացնել:

Այդ որպէսզի այս անելոքը ասելիքները վերանան, խնդրում ենք գործարանի սխեման, իր աշխատելու վիճակում հաստատուած մեքենաներով եւ իրենց լուսանկարներով մանուկի միջոցով տեղեկացնել հանրութեան, այսինքն իրանահայութեան տրամադրած դրամազլխով կառուցուած կամ կառուցելիք գործարանի իրական իրաւատիրոջը:

2. Համաձայն ազգային «իշխանութեան» կողմից «շտապօրին» օգնութեան» համար տրուած կոչ-յայտարարութեան իւրաքանչիւր նւիրատուի յանձնարարում էր յատկացնելիք գումարը յանձնել հանգանակիչ մարմինին, որ միայն պարտականութիւն ունէր հաւաքելու դրամական այդ նւիրները եւ յատկացնելու աղէտեալ գօտու «շտապօրին» օգնութեան:

Սակայն մի խումբ մարդիկ առանց պատասխանատւութիւն զգալու, սկզբում որպէս վաշխատու տոկոսով են տուել հաւաքուած դրամները եւ տարիներ յետոյ ծրագրել են «շտապօրին» օգնութիւնից» աչք փակել եւ գնալ Միւնիքում ինչ որ գործարան հիմնելու պատրասկով վերջ տալ այս ողբերգութեան ու ոճիրին:

Այդ հարց է ծագում թէ ո՞ր ժողովն է որ նման որոշում է կայացրել, ինչո՞ւ մանուկում չեն հրատարակում համապատասխան նիստի կամ նիստերի արձանագրութիւնները: Եթէ կայ նման մէկ նիստ իր արձանագրութեանը, խնդրում ենք հրապարակել արձանագրութիւնը, որպէսզի նիստում կամ նիստերում եղած անցուղարձերից լրիւ տեղեկ լինեն ժողովուրդը եւ մարդիկ որոնք 14-15 տարի մտել են մասնակից են եղել այդ նիստերին չայտարարեն թէ մենք տեղեկ չենք եւ որպէս խրտուիակներ ներկայ ենք եղել ժողովներին:

3. Կարծում ենք որ դուք ասելի տեղեկ էք, որ Իրանի Իսլամական Յեղափոխութիւնից յետոյ չեղեալ է համարուել բոլոր Իրաւական Մարմինների գոյութիւնը եւ յանձնարարել է որ Ի.Ի.Հ. նոր վաւերացրած կանոնադրութիւններով ձեռնարկել Իրաւական Մարմին համարուող կառոյցների վերակազմութեան եւ այդ քայլը չի կատարուել նախկին «Շուրայե Խալիֆեգարու» կողմից եւ հետեւաբար ոչ Թեմ. Խորհուրդները եւ ոչ էլ Պատգամաւորական ժողովները վաւերական չլինելով, Իրանում եղող բանկերը «Շուրայե Խալիֆեգարու» անունով ոչ հաշիւ են բացել եւ ոչ էլ որեւէ աւանդ գումար են ընդունել, որին տոկոս վճարեն: Խնդրում ենք պարզել թէ ո՞ր անհատների անուններով են այդ դրամները շահագործուել եւ ո՞ր բանկերում, որի տոկոսը շուրջ 100.000.000.- ռիալ է նշուած մանուկի մէջ լոյս տեսած հաղորդագրութեան մէջ եւ ի՞նչ երաշխաւորութեամբ է 400.000.000.- ռիալ ժողովրդից հաւաքուած դրամը զանազան անձանց անունով պահ դրուել բանկերում: Արդեօք այս մասին ժողովները նախատեսել են բոլոր բարդութիւնները թէ՞ նորից անտեսել են նիրատուների իրաւունքը:

4. Այս բոլորից յետոյ Պատգամաւորական ժողովը իր նիստերում անդրադարձել է նւիրատուի եւ կտակողի կամքի անբեկանելիութեան օրէնքին Հայաստանեայց Առաքելական Սրբ. եկեղեցու անձնական իրաւունքներին եւ աւանդութիւններին թէ՞ ոչ, եւ ի՞նչ իրաւունքով անտեսել է օրէնքի սահմանները եւ թեկանել է անձի կամքի իրաւունքը եւ իրեն մխրճել է օրինազանցութեան տիղմի մէջ: Եւ վերջապէս չպէտք է մոռանանք որ հաւաքուած դրամները նախապէս ճշտորոշուած նպատակի հա-

Հասարակական

Շաբ. էջ 5-ից

մար.գանձույն են երեք Թեմերի՝ Թեհրան,Իսֆահան եւ Ատրպատականի ժողովրդից: Արդեօք այս շեղումները արժարժեն՞ են միւս թեմերի Պատգամատրական ժողովներում թե՞ համաձայն ինքնագլուխ գործելաձեւին անտեսել են նաեւ այս խնդիրը:

Չմտնելով արեւի մանրամասութեան մէջ խնդրում ենք յարգելի Դոկտոր Չեր մաքուր անցեալով եւ բանիմաց քրիստոնիայի հաւատքով վերը յիշած սխալների, թերացումների եւ օրէնքը անտեսելու մասին պետք եղած վաւերագրային լուսաբանութիւնները շատ թափանցիկ ձեւով փոխանցել ժողովրդին, որպէսզի տիրող հիասթափութեան առաջն առնի: Չպէտք է մոռանալ, որ անցեալի սրխալները ընդունելը, ինչպէս ասել է մեր գաղափարական այրերից մէկը՝ պատարեր եւ կրթիչ է (Ռ.Խ.):

Եթէ քաջութիւն ունենանք լուսաբանել եւ ընդունել կատարած սխալները, կանխած կը լինենք նորընտիր մարմիններին, որ քայլէն նախկին մարմինների ոտնահետքերով, եւ առաջնորդած կը լինենք նրանց քայլ վերջնելու գաղափարական եւ հաւատարոք հասարակական գործիչին վայել ճամբով եւ մաքուր ձեռքերով կատարելու մեզի յանձնած ժողովրդի գործերը, որովհետեւ պէտք է հաւատանք եւ ականջալուր լինենք 20-րդ դարի սրբակրօն այրերից Ս.Ջ.-ի հետեւեալ խօսքերին.-

«Գաղափարական գործը կարելի է կատարել գաղափարական մարդկանց մաքուր ձեռքերով, անմաքուր ձեռքերով անկարելի է գաղափարական գործ կատարել»:

Սպասելով Չեր մանրամասն ու վաւերական լուսաբանութիւններին մնամ յարգանքներով Մ. Աբգար

«Լոյս» տասնինգորտայ թերթի յարգելի խմբագրութեան, տպագրութեան խնդրանքով:

յարգանքներով՝ Մ. Աբգարեան

Ուղղում

Թերթիս 24-րդ համարի 6-րդ էջի, երկրորդ սիւնեակում հետեւեալ վրիպումներն են տեղի ունեցել:

ա- 28-րդ տողում *գարմանայի* բառից յետոյ պիտի լինէր *աւանի* բառը:

բ- 37-րդ տողում *չունեցող* բառի սկզբում վրիպել է չ տառը:

գ- 38-րդ տողում տպագրուել է *չբերող* բառը, որը պէտք է լինէր *բերող*:

«Լոյս»- *Յոյսով ենք վրիպումների համար ներողամիտ կը լինեն թէ՛ յարգելի հեղինակը եւ թէ՛ սիրելի ընթերցողները:*

Գնահատանք եւ Նկրատուութիւն

Ի գնահատանք «Լոյս» երկշաբաթաթերթի անխըտրականութեան, անաչառութեան եւ շինիչ քննադատութեան ոգու, նկիրում է 100.000 (հարիւր հազար) միալ:

*Նորանոր յաջողութիւնների մաղթանքներով՝
Լ. Գ. Մինասեան
Ն. Ջուղա
6 մարտի 2001թ.*

1923 թականից նրա մայրը, ապա աւագ քոյրը «Նիւ Եօրթ լայֆին» նամակներ են գրել 1916 թ. Հարպուտի բանտում մեռած քեռու՝ Սեդրակ Շէթանեանի ապահովագրական գումարը (3000 Ֆրանկ ոսկով) ետ ստանալու համար: Ընկերութիւնը տարբեր պահանջներով գործը ձգձգել է մինչեւ 1999 թ. նոյեմբեր: Ապա Մարտին Մարութեանը փոխհատուցման պահանջով Դաշնային դատարան է դիմել անձամբ իր եւ կեանքն ապահովագրած Մեծ եղեռնի բոլոր գոհերի անունից. միայն 1915 թ. կազմուել է 7671 ապահովագիր՝ 10281134 դոլար գումարով: Իրաւական հիմքն ամրապնդելու նպատակով աշխատեցինք կալիֆոռնիացի սենատոր Չակ Փուչիկեանի հետ: 6 ամիս անց Կալիֆոռնիայի նահանգապետի ստորագրած օրէնքում նշում էր, որ 1895-1923 թթ. գոհերի ժառանգները կարող են մինչեւ 2010 թ. դատական հայց ներկայացնել Կալիֆոռնիայում: Մենք բանակցում ենք հնարատր համաձայնագրի կնքման շուրջ: Եթէ բոլոր յօդածներն ընդունեն, ապա 2 ամսում հնարատր կը լինի համաձայնութեան հասնել: Մնացեալը կը տեւի 6 ամսից մինչեւ 1 տարի: Այդ ժամանակ կը կարողանանք քայլեր ձեռնարկել եւրոպական ընկերութիւնների դէմ: Մտադիր ենք այդ նպատակով խորհրդածողովներ անցկացնել Լոնդոնում եւ Փարիզում:

-Որոշ դէպքերում կարող են ժառանգներ չլինել:

«Նիւ Եօրթ լայֆը» խնդրեց, որ կազմի Ֆոնդերը տնօրինող «միատր»: Հայ համայնքը մեզ արդէն յուշել է Ֆոնդերը վատահել Բրոք Էրբրեանին, Հայաստան համագումարին, Հայ ազգային յանձնախմբին եւ այլն: Ես կապուեցի սենատոր Դոքմեթեանի՝ Կալիֆոռնիայի նախկին նահանգապետի հետ, բայց այդ կէտը տակաւին կարգաւորած չէ:

-Որքա՞ն էք պահանջում:

Մեր հաշարկած գումարը 3 միլիարդ դոլար է: Եթէ մեզ առաջարկեն խղճով գումար, ապա կընդհատենք բանակցութիւնները, քանի որ դա կը լինէր Յեղասպանութեան գոհերի յիշատակի անարգում:

-Դուք ասում էք,որ «Միութիւնը» գնել է «Նիւ Եօրթ լայֆին» ապահովագրերը: Շարունակելով՞ էք ձեր քայլերը:

Ես Ֆրանսիայի Ազգային ժողովի Պատգամատր Պատրիկ Դեթեանի միջոցով կապուեցի Արամ Գեղորգեանի հետ: Կը փորձեմ Ֆրանսիայում փաստաբանների խումբ կազմել աներիկեան խմբի նմանութեամբ:

-Ուրիշ ի՞նչ ծրագրեր ունեք:

Հետաքրքրուել եմ Բաղդադ-Բեռլին երկաթգծի կառուցմամբ: Կարծում էի, թէ Ֆինանսատրուել է Թուրքիայի կողմից, բայց իրականում «Դոյչէ բանկն» է Ֆինանսատրել: Գերմանական բանկը շատ քիչ է վճարել թուրք բանտրներին, հարուցելով դժգոհութիւն եւ գործադուլներ: Իսկ հայ բանտրներին ընտել է վճարել, նրանց ճակատագիրը թողնելով թուրքերի հայեցողութեանը, որոնք էլ հարցն արմատապէս լուծեցին: Եթէ գտնեմ այդ հայ բանտրների ժառանգներին, «Դոյչէ բանկը» կը յայտնի տհաճ կացութեան մէջ:

-Հետաքրքրուել էք Յեղասպանութեան գոհերի ունեցւածքով:

«Նիւ Եօրթ լայֆին» դէմ իմ ձեռնարկմանը տեղեկանալով՝ հայերն սկսեցին ինձ ներկայացնել կայքի վկայագրեր: Բայց ես ասացի, որ դրա հերթը դեռ չի եկել: Անշարժ գոյքը բարձրացնում է իրաւաբանական այլ խընդիրներ: Հողը քաղաքական խնդիր է: Յոյս ունեմ այնքան ապրել, որ տեսնեմ թուրքական կառավարութեան դէմ ուղղած դատական գործերը: ■

Համագործակցութեան կամուրջներ Գազապարը միակ կառույցը չէ

Արդէն ակնառու է Իրան-Հայաստան համագործու-թեան գործնականութիւնը: Իրանի պատուիրակութեան վերջին այցը դրա լաւագոյն վկայութիւնն էր: Պատուիրակութեան կազմում էին նաեւ Իրանի խոշոր ձեռնարկատէրեր, բանկի կառավարիչներ, պետական գործիչներ: Պատուիրակութեան կազմում, որպէս խորհրդի անդամներ, Հայաստանում էին նաեւ Իրան-Հայաստան առեւտրի պալատի նախագահ Լեւոն Ահարոնեանը, առեւտրի պալատի հիմնադիրներ Վարուժ Սուրենեանը եւ Ռաֆիկ Պետրոսեանը: Լեւոն Ահարոնեանի հետ մեր գրոյցը նրանց գործ-նական ծրագրերից է:

-Հաճե՛ի է նկատել, որ յաճախակի են դառնում այցերը, ինչը լաւագոյն հաստատեցն է Իրան-Հայաստան կապերի ամրապնդման: Ո՞րն է այս այցի հիմնական նպատակը եւ պատուիրակութեան առաքելութիւնը:

-Իրանի եւ Հայաստանի միջեւ կար պայմանաւորաբար տա-րին մէկ անգամ հրախիւտել համատեղ քննարկելու եւ ձեւաւորելու համատեղ աշխատանքների ծրագրերը: Առաջին ժողովը անցկացել էր Իրանում. սա հեթոքական հանդիպումն էր այս անգամ Հայաստանում: Անհրաժեշտ է նշել, որ երկու կողմերն էլ շատ բարեացակամ են տրա-մադրուած:

-Ի՞նչ հարցեր քննարկեցին այդ ժողովում եւ ի՞նչ նոր պայմանագրեր կնքեցին...

-Ամենակարեւորը, որ կնքեցինք, Իրան-Հայաստան գազամուղի կառուցման պայմանագիրն է:

-Եւ ի՞նչ ժամանակահատուածում այն կիրառործի:


-Գազամուղի կառուցումը կը տեւի ընդամենը 18 ամիս, որն, ըստ ինձ, նման մեծ գործի համար, բաւականին կարճ ժամկէտ է: Հայաստանում արդէն սկսել են նախնա-կան աշխատանքները: Մի քանի օրից սկզբնական քայլեր կը ձեռնարկեն նաեւ Իրանում...

-Այսինքն, առաջին գործնական քայլերն արդէն կա՞ն:

-Այո: Բիւրիկէ, դեռ որոշ խնդիրներ վերջնականապէս յտակեցում չեն, բայց այդ հարցերը չեն խանգարի գազամուղի կառուցմանը: Կարեւոր խնդիրներից մէկն էլ Արաքս գետի վրայ ամբարտակի կառուցումն է, ինչն օգ-տակար է թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Իրանի համար: Պայմանաւորաբար կայ Հայաստանում նաբի գտարան ըս-տեղծելու: Այդ ուղղութեամբ շարունակում են բանակցու-թիւնները: Բիւրիկէ, հասկանալի է ամբողջ հումքը տրա-մադրելու է Իրանը: Ինչպէս գիտե՞ք՝ նաբը վառելանիւթից բացի, գտելուց յետոյ, օգտագործում է քիմիական ար-դիւնաբերութեան մէջ: Սա նոյնպէս շատ կարեւոր է Հա-յաստանի համար եւ կը նպաստի ընդարձակել «Նայի-րիտի» արտադրութիւնը եւ Հայաստանի համար նոր շու-կաներ ստեղծելուն:

-Որքան տեղեակ ենք՝ Ձեզ հետ Հայաստան է այցելել ԻԻՀ Արեւելեան Ատրպատականի նահանգապետը:

-Այո, եւ կը քննարկեն պայմանագրեր Ատրպատական նահանգի ու ՀՀ Միւնիքի մարզի միջեւ: Ասեմ, որ պայ-մանագրերը շատ տարաբնոյթ են: Որոշ պայմանաւորա-ծութիւններ եղան նաեւ Արարատի մարզի հետ: Ինչպէս գիտե՞ք Թւարիզը Իրանի ամենակարեւոր նահանգներից մէկն է, որը յայտնի է իր խոշոր ձեռնարկութիւններով եւ էկոնոմիկական մեծ շուկաներով: Մօտ ժամանակներս Թւարիզում կը կազմակերպի սեմինար-ցուցահանդէս, ո-րին Հայաստանից կը մասնակցի մօտ 200 մարդ: Առեւ-տրի այս ցուցահանդէսը հնարաւորութիւն կը տայ



հա-յաստանին ներկայանալ եւ ձեռք բերել նոր գործընկեր-ներ, որոնք կը ցանկանան խոշոր ներդրումներ անել Հա-յաստանում: **-Ասացիք, որ Իրանը Հայաստանի համար ներդրում-ների ծրագիր է պատրաստել...**

-Առայժմ պատրաստած ծրագրերը ապրանքային ներդրումների տեսքով են: Այսինքն, որոշ ապրանքներ մեծ քանակութեամբ կը տրամադրի Հայաստանին, որի դիմաց Հայաստանը կը վճարի ասենք 10 կամ 15 տարի յետոյ...

-Ասել է թէ՛ խօսքը դրամային ներդրման մասին չէ:

-Այս անգամ Հայաստան էին եկել Իրանի խոշոր բանկերի կառավարիչներ, ովքեր ցանկանում էին ծանօթանալ Հայաստանի ներդրումային դաշտին: Բայց այս-տեղ կայ մի հարց. Իրանը խոշոր գումարային ներդրումների համար Հայաստանի կառավարութիւնից վառ-բացում երաշխիք է պահանջում: Դէ հասկանալի, որ կա-ռավարութիւնը առանց Ազգային ժողովի չի կարող նման պայմանաւորաւորութեան գալ: Առայժմ այս հարցը լուծ-ւած չէ. համատեղ քննարկում են այս հարցի լուծման եղանակները, որը կարող է նաեւ լինել ապրանքային փոխհատուցման ձեւով օրինակ էլեկտրաէներգիայի...

-Պարոն Ահարոնեան, իսկ որ՞ն է Իրան-Հայաստան առեւտրի պալատի առաքելութիւնը այս գործարքներում:

-Առեւտրի պալատն այս հարցերում աւելի շատ հա-մադրողի դերում է: Մենք փորձում ենք օգնել պետութիւն-ներին կնքուած պայմանագրերի իրագործման, նոր միջոց-ների հայթայթման խնդրում: Այս հարցերում առեւտրի պալատը հանդէս է գալիս որպէս մեղմ: Հարկատր է նը-շել նաեւ, որ կազմել են խորհուրդներ, որոնք պէտք է հե-տետալականօրէն անդրադառնան արած գործերին, կան-խեն հնարաւոր ամեն խոշորոտ այս համաձայնութիւն-ների կենսակոչման ճանապարհին:

**Անի Վարդանեան
(Աւանդարդ 16.02.2001)**

Պրոն. Լեւոն Ահարոնեանը գնահատանքի արժանացաւ



Վերջերս Հայաստանում տե-ղի ունեցաւ, իրանցի գործա-րարների ներկայացրած ար-տադրանքների ցուցահանդէս, որը մեծ յաջողութեամբ իր ա-ւարտին հասաւ: Այն արժանա-ցաւ ականատես-մասնագէտնե-րի բարձր գնահատանքին:

Ինչպէս, նախապէս հաղորդել էինք՝ ցուցահանդէսը կազմա-կերպել էր Իրան-Հայաստան Առեւտրի Պալատը: Իրանի «Արդիւնաբերութեան» նախարարութիւնը, մի գովասանագրով բարձր է գնահատել վերոյիշեալ պա-լատի եւ նրա նախագահի՝ պրոն Լեւոն Ահարոնեանի այդ ոլորտում ծաւալած գործունէութիւնը:

Արտագ-Մակու գաւառը եւ սուրբ Թադէի վանքը

(Շար. նախորդ համարից)

Չարդերուն գաւառակը Արեւմտահայաստանին մօտ է. գաւառակը իր անունը ստացել է այնտեղ գտնուող չորս վանքերից, որոնք են՝ Դիադիանայ Ս. Յովհաննու վանքը, Քիլիսաքեանդի վանքը, Չանգի Մերա Ասպարածին- Ասպարագնայ- Շործոր () եւ Ս. Թադէի վանքը: Չարդերունի խաները քիւրդ էին, որոնց նախահայրերը անցնալով գաղթել էին Հայաստան Արճէշ գաւառից: Խաները պատկանում էին Հէլյարանցի աշիրեթ ցեղին: Չարդերունում բնակւում էին կարէլյնցի թուրքեր: Կարէլյնի եւ նրա շրջակայքում բնակող քիւրդերի հետ հայերը դարաւրակներին հաստատել էին բարեկամական յարաբերութիւն: Գաւառակում գտնում են հայկական գերեզմանատներ:

Դարաշան գաւառակը գտնում է Մակի հարաւ արեւելքում, Արաքսի ափին: Դարաշանի հայկական գիւղերից էին՝ Բաշքեանդը (Դարաշանը), Օրթաքեանդը, Դիրքեանդը:

Գաւառի ամենամեծ գետը Մակուն է, որ ոռոգում է Մակուի դաշտը: Նրա մի ճիւղը սկսում է Տաճկահայաստանի Շիլի լճից, որ գտնում է Բայազետի հիւսիսում, Մեծ Մասիսի ստորոտում: Երկրորդ ճիւղը իջնում է Աւաջուղից, որ Մանգիար գիւղի մօտ խառնում է առաջինի հետ: Երրորդ՝ ամենամեծ ճիւղը կազմում է երեք գետակներից: Առաջին գետակը՝ Մարիդայի, սկսում է Շաւարշ լեռների հիւսիս-արեւելեան կողմերից եւ ոռոգում է Թայգարայի հովիտը. երկրորդ գետակը՝ Կուսանացը, իջնում է Աւաջուղի հարաւային սահմաններից, Հարամլու ձորում միանում է Մարիդայիի հետ: Երրորդը բոխում է Մանատրուկ եւ Սաեար լեռներից, անցնում է Թադէու Առաքեալի վանքի տակից: Այս երեք գետակները Ասպարածին (ժործոր) վանքի ատերակների մօտ խառնում են իրար եւ կազմում են Չեմգիմար ճիւղը, որ Ակի ժայռոտ ձորից անցնելով՝ հարաւից դէպի հիւսիս, Օղակ գիւղի մօտ խառնում է վերեւում յիշած երկու ճիւղերի հետ եւ դէպի արեւելք թքելով, մտնում է Մակուի ձորը: («Մասիս լեռների հարաւային ստորոտները» Ա. Թօխմախեան, էջ 33-34):

Մակի գաւառը հարուստ է հանքային ջրերով: Նշանաւոր են եղել՝ Մակի, Աւաջուղի եւ Գարայնի խանութիւնների մէջ գտնուող չորս հանքային ջրերը: Առաջինը գտնում է Մակուի եւ Աւաջուղի միջեւ՝ Բաշքեանդի մօտ. այս ջուրն ունի ախորժեղի թթւաշ համ. տաքութիւնը այնքան մեղմ է, որ ջրի մէջ ապրում են ձկներ: Յաջորդ երկուսը գտնում են Թայգարայի հովտումը՝ մէկը Ձէլյա, իսկ միւրը Թղուտ գիւղի մօտ: Մրանք երկուսն էլ ծծմբաջրեր են եւ ատելի նշանաւոր է երկրորդը: Չորրորդ գտնում է Շոթ գիւղի մօտ, որի ակը նման է քարէ թոնիրի. ակից բխող ջուրը յստակ է, որը բոլից իջնելով եւ խառնելով հողի հետ փրփրում եւ քարանում է: (Ա. Թօխմախեան Նշ. Աշխ)

Պարսիկ բանասէր դէտ. Բաբի Բադիին իր «Պարսկաստանի ընդարձակ աշխարհագրութիւն» գրքի առաջին հատորում քարկում է հետեւեալ հանքային եւ տաք ջրե-

Սերոժ Թիլիմեան

րը Մակի շրջանում. 1.- Շահաբադի տաք ջուրը (Մակից 27 կիլոմետր դէպի հարաւ- արեւելք). 2.- Բաշքեանդի տաք ջուրը (Մակու- Բազրրգան ուղու 13-րդ կիլոմետրի վրայ). 3.-Արաք Դիգաջ հանքային ջուրը (Մակի արեւմուտքում). 4.- Չի սու հանքային ջուրը (Մակի արեւմուտքում). 5.- Չաիէէ ՍոՖլա տաք ջուրը (Մակի հարաւ-արեւմուտքում, համանուն գիւղում). 6.- Միահ Չէշմէ տաք ջուրը (Չալդրան գիւղաւանում, Դարաքիլիսայի հարաւ-արեւմուտքում):

Պատմական ակնարկ

Արտագ գաւառի հնագոյն պատմութեան համար գոյութիւն ունեցող փաստացի տեղանքները մինչեւ այժմ բաւարար չափով չեն ուսումնասիրւած. այդ նպատակով պէտք է տեղում կատարեն ընդարձակ պեղումներ. ուրարտական ժամանակաշրջանին վերաբերող պատմութիւնը գրելու համար, մինչ այժմ յայտնաբերւած բնակավայրերի, գիտական շրջանի սեփականութիւնը դարձած սեպագիր արձանագրութիւնների կողքին մեծ հաւանականութեամբ երեւան կը գան նորերը, ու եթէ նորովի դիտւի ուրարտական պատմութիւնը՝ այն համարելով հայ ժողովրդի միաձոյլ պատմութեան մի հատւածը, ապա պէտք է վերաշարադրել մինչ այժմ ճանաչւած պատմական դէպքերը որ վերաբերում են այդ ժամանակահատուածին եւ Արտագ գաւառին:

Արտագը լինելով Հայաստանի ժայռամասային գաւառը, կարծես դուրս է մնացել մեր պատմիչների ուշադրութեան կենտրոնից, իսկ եթէ նրանց մատենաներում խօսք է գնացել նրա մասին ապա առաւելաբար կրօնական ատանդութեան եւ վկայաբանութեան սահմաններում, ինչպէս Ս. Թադէու Առաքեալի եւ Մանդուխտ կոյսի վկայաբանութեան մէջ. «Եւ ինքն սուրբ առաքեալն առնոյր գաշակերտան եւ փութով հասնէր յաշխարհն Հայոց, առ թագաւորն Մանատրուկ, ի գաւառին Արտագ, ի քաղաքագետն Շաւարշան, յապարանս արքունի, որ էին հովոց գետինք թագաւորացն Հայոց» (Մովսէսը հայկականք Բ. Հատ. Վեներ. 1853 էջ 13):

Խիստ հետաքրքիր է Պատմահօր այն վկայութիւնը, որի համաձայն Արտագի բնակչութիւնը՝ Ալանաց երկրից, Արտաշէտ թագաւորի ժամանակաշրջանում գերեզմարած ժողովրդի ժառանգներն են. «Եւ հրամայեալ Արտաշիսի բնակեցուցանել զնոսա ի հարաւոյ յարեւելից կուտ Մասեաց, որ կոչէր Շաւարշական գաւառ, ի վերայ պահելով զբնիկ անունն Արտագ. քանզի ի աշխարհն ուստի գերեցանն՝ Արտագ կոչի մինչեւ ցայսօր ժամանակի»:

Արտագը պատմիչների միջոցով յիշուել է նաեւ մի այլ առիթով. 5-րդ դարի ազգային ազատագրական երկու ճակատամարտերը՝ Վարդանանց եւ հետագայ դէպքերը տեղի են ունեցել Արտագ գաւառի սահմաններում. այդ պատճառով ծանօթ եւ մտերիմ անուններ են՝ Աարայրը, Տղմուտը, Եղիմը, Ներսէհապատը:■

Մշակոյթ

àñáß³ İÝ³ ñİÝ»ñ
 ŞP³ Ñÿ³ Ü¿ ü »ñ¹ áí èÇ! ¼á áèÇ
 í »ñ³ µ»ñ»³ Ē Á³ Û³ Ý³ İ³ İÇó
 Ñá. »µ³ ÝáóÃ»³ Ý í »è³ ÝİÇóÝÇó

*Մտրոպ Բալայեան
 Դոկտոր-պրոֆեսոր
 քարզմանիչ՝ ճարտ. Նիկիտ Միզոյանեան*



Այստեղ ի դէպ, պիտի նշել որ, Ֆերդով-սու իւրայատուկ է քարձրագոյն դիրքը, համաշխարհային գրականութեան մէջ, եւ նրա մեծ հանճարը նրանում է, որ հար-իւրաւոր տարիներ առաջ, նախքան անգլի-ացի հանճարեղ Շեքսպիրն ու Ֆրանսացի հանճարեղ Ռասինը, նա իր հազագիտ, դիպուկ եւ գրաւիչ ոճով ու պերճախօսութեամբ, խիզախօրէն մարդ արարածի թու-լութիւններն է յայտնաբերել ու ներկայացրել:

Ամբողջ «Շահնամէ»-ում բանաստեղծական չափը եւ կշռոյթը, միանշանակ ու հաւասարակշուած է: Ի դէպ գիտնենք, որ բանաստեղծը նոյնիսկ, գործի դնելով բոլոր բանաստեղծական միջոցներն ու տեխնիկան, որպէսզի բանաստեղծութեան բովանդակութիւնն ու խօսքը, միա-հաւասար չափ ու կշռոյթով տեղին ու ճշգրիտ տեղադրուի, դժարին ու երբեմն մի անհնար գործ է: Ֆերդովսին անեղ-րածեշտ դէպքերում, օգտուել է բառերի երաժշտութիւնից ու հնչիւնախաղութեան արեստից:

«Ջարոլ»-ում թիկնած ու գինով հարբած, խիստ հարբած մարդուն, չտաս ո՛չ մի հարց:

Բանաստեղծը, ներկայացնելով իր պոեմի զանազան կերպարները, նկատի է առել, նրանց հոգեկան առանձ-նայատկութիւնները, մանաւանդ տարբեր բնատրոյթիւն-ները, որ բնականաբար պայմանաւորում են նրանց գոր-ծերը եւ վարմունքները: Օրինակ՝ մէկը չափազանց մի-ամիտ է եւ խաբոււմ է, (ինչպէս «Մոհրաք»-ը՝ «Ռոստոմ»-ից), միւսը խորամանկ է, մի ուրիշը պաղարիւն, մէկը դի-րագրգիռ, միւսը խելամիտ ու հասկացող, մէկը թեթեւ-միտ, միւսը նախանձ ու քինախնդիր, մէկը ինքնահաւան ու եսամոլ, միւսը այլասեր՝ անձնագոհ լինելու աստիճան:

Անվերայպահօրէն կարելի է ասել որ, Ֆերդովսու պատմաձքների թատերական արժէքը եւ թափը, համե-մատում է Շեքսպիրի լաւագոյն պիեսների հետ: Պատմը-ւաձքները այնքան գրաւիչ ու հետաքրքիր են, որ հար-իւրաւոր տարիներ է ինչ երգասացները պատմում ու վե-րապատմում են ժողովրդին: Որոշ պատմաձքներ, ինչ-պիսին, են «Ռոստոմ» ու «Միաւոշ» պատմը-ւաձքը, ժամանակակից գրողների միջոցով, վերածել է թատերգութեան ու բեմադրուել: Նրանցից է, «Միաւոշ ու Մուդաբէ» թատերգութիւնը, (գրել է պարսկահայ գրող, Գեորգ ԴարՅին. 1917- 1964), որը անգամներ բեմադրու-ւելով Իրանում ու Հայաստանում, ժողովրդի լայն ընդու-նելութեան է արժանացել:

Այս պատմաձքների բանաւոր հաղորդումը թէյարան-ներում հարիւրամեակների ընթացքում, եւ դրանց ցուցա-դրումը բեմահարթակներից, ապացուցում է, որ Ֆերդով-սին ամենայն ժողովրդակաւութիւնը վայելող մի գրող է: Ի դէպ, որեւէ մի գրող, այն ժամանակ է ժողովրդի սիրող ձեռք բերում, երբ կերպարները ներկայացնելիս, նրանց հոգեկիճակն ու վարքերը բնութագրելիս եւ իրադարձու-

թիւներն ու արկածները զարգացնելիս, գործնականօրէն պահպանում է հոգեբանական օրինաչափութիւնները: Այ-լապէս, կերպարները եւ ոչ իրական դէպքերը, արհեստա-կան ու պայմանական կը լինեն, ինչպիսին են ժամանա-կակից «տորթները», որոնց շարժումները տեխնոլոգիա-կան արժէք են ներկայացնում , բայց ոչ՝ արեստում:

Ֆերդովսու պատմաձքներում, կոնֆլիկտն, քաջշուկ-ները եւ մարդկային հակասութիւնները, արտակարգ թա-փով ու սրութեամբ են ներկայացւած: Մտաւորապէս բո-լոր մարդկային դրական ու բացասական յոյզերը, ինչ-պիսին են՝ սէր, ինքնագոհութիւն, մեծահոգութիւն, քաջու-թիւն, գոհաբերութիւն, քինախնդրութիւն, խանդ, վախկո-տութիւն, չարանեղութիւն, եսամոլութիւն, ազահութիւն, դաւաճանութիւն եւ այլն, Ֆերդովսու պատմաձքներում, իրենց ուրոյն տեղն ունեն, առանց այն որ դրանք բնու-թագրելիս, անհաճոյ չափազանցութիւն, կամ փոքրագոյն անճաշկութիւն օգտագործւած լինի: «Ռոստոմ»-ը, Ֆեր-դովսու էպոսի՝ կերտած հերոսն է:

Աւելացնենք որ, «Ռոստոմը» մի խտացւած ու սիմ-տոլիկ անհատականութիւն է: Նրանում է Իրանեան ազգի իւրայատկութիւններն, առաւելապէս խտացւած ու մար-մնատուրած, ինչպիսին է նաեւ, միւս ազգերի մօտ, օրի-նակ՝ «Ռոյան» կամ «Ժամդարք»-ը՝ Ֆրանսիայում եւ «Մասունցի Դաւիթ»-ը՝ Հայաստանում:

Ֆերդովսին ամբողջ «Շահնամէ»-ում, պահամ է երկի ամբողջականութիւնը եւ թափը: Ինչպէս նախապէս անդ-րադարձել ենք, նա կերպարները նկարագրելիս, լրիւօրէն պահպանում է առարկայականութիւնն ու իրատեսու-թիւնը: Նա որեւէ թագաւորի կամ հերոսի, սուկ իրենց պաշտօնի բերումով չի գովասանել, (լաւագոյն ապացոյցն է, «Պարսից թագաւոր՝ «Քէյքաւուս»-ը): Այլ միայն նրանց, որ լաւն են եղել, (լաւութիւնը, անշուշտ, յարաբերական է, ըստ Ֆերդովսու հայեցողութեամբ, ժամանակի եւ տե-ղական պայմանների բերումով), եւ աշխատել են ի շահ ազգին ու հայրենիքին:

Հակառակ որոշ այլ ազգերի դիցաբանութեան, (մա-նաւանդ՝ յունականը), Ֆերդովսու «Շահնամէ»-ն երբէք, անվայել եւ հոռի մտքեր ընթերցողին չի ներշնչում: (բա-ցառութիւն է կազմում, «Ռոստոմ»-ի խաբելը «Մոհրաք»-ին, որը եւ միգուցէ պայմաններն են պարտադրել, այլեւս «Ռոստոմ»-ը կը սպանէր եւ Իրանը կը զրկէր նրա գոյու-թիւնից ու ծառայութիւններից): «Շահնամէ»-ում բացար-ձակօրէն, մէկ բառ նոյնիսկ գոյութիւն չունի սիրային կամ սեռային շեղումների մասին, ինչ որ կայ, դա միայն մա-քուր սէրն ու ազնութիւնն է : («Մուդաբէ»-ի սէրը, հանդէպ իր հոգեւորող՝ «Միաւոշ»-ին, այնպէս է արտայայտւած, որ ընթերցողին նողկանք է պատճառում): «Շահնամէ»-ում, ցեղապաշտութիւնից ոչ մի հետք գոյութիւն չունի, այնպէս որ բացասական կերպարներ լինում են, թէ՛ պար-սիկների եւ թէ՛ թուրանցիների մօտ, նոյնպէս՝ դրական հերոսներ: Օրինակ՝ բացասական իրանցիներն են՝ «Մալմ»-ն ու «Թուր»-ը, եւ մանաւանդ, «Քաւուս» թագա-ւորը, եւ դրական թուրանցիներն են՝ «Ֆառանգիս»-ն ու «Փիրան»-ը:■

Ճար. 2

¹ Ֆերդովսին ինքը նաեւ, յստակութեամբ է այս խնդիրը արտա-յայտում, «Ռոստոմը» սուկ մի դիցազն էր «Միստանամ»...: Ընդ որում, «Ռոստոմ»-ի անունը եւ նոյնիսկ իր ձիւն՝ «Ռայաշ»-ը, նա-եւ յիշատակւած է նախա-Ֆերդովսիական արքիւրներում, օրի-նակ՝ Մովսէս Խորենացու Հայոց պատմութեան մէջ, հինգերորդ դարում (5-դար նախքան Ֆերդովսին) :

Բալիկը



Չասել

Մայրամուտ էր: Արեւն արդէն իր վերջին շողերն էր հաւաքում սարի երկնասլաց գազաթից ու կարծես նա էլ էր շտապում տուն դառնալու:

Այդտեղ՝ իմ ծնած գիւղի վաղուց լքած ու մոռացած գերեզմանատնում խորհրդաւոր մի լռութիւն էր տիրում, որ լռութիւնն անգամ իր անխօս խօսքերով պատմութիւնների շարքն էր պատմում այդ մեղք չգործած մեղաւոր բնակիչների անցեալից, որոնք վաղուց շատ վաղուց այցելու չէին ունեցել:

-Ո՞ր ես Արծնակ,- մենք գնում ենք,- շտապիր:

Ուղեկիցներիս ձայներն են լսում, որ ինձ են կանչում, բայց ես դեռ չիրմաքարից շիրմաքար են քայլում ու Բալիկին են փնտռում:

Ո՞վ էր նա:

Սաստիկ ձմեռ էր: Ծանր ձիւնը եկել ու ծածկել էր ողջ գիւղը: Գիւղի նեղիկ փողոցները լցել էին ձիւնով ու տնից տուն գնալու, հազիւ թէ անցք մնացած լինէր, միայն գիւղի գլխաւոր ճամբան, որ սկիզբ էր առնում երկաթուղու կայարանից, գիւղացիների ջանքերով էր բացել, իրենց աւօրեայ կարեւոր գործերը կարգադրելու:

Չմռան ցուրտ գիշերներից մէկն էր երբ մեր տան դուռը քակեցին: Տնեցիներս քնից արթնացանք: Մայրս շտապ ցած վազեց ու դուռը բացեց եւ յետոյ էլ դռան փակելու ճռուցը լսեցինք...

Քանի վայրկեան անց, մի գոյգ մարդ ու կին իրենց դեռատի աղջկան շալակած, սանդուղներից հեւալով ու տնքալով վեր բարձրացան: Յուրտը նրանց ուժասպառ էր արել: Մայրս իսկոյն թոնիրը վառեց ու թոնրի շրթին մի ներքնակ փռելով գգուշօրէն վրան տեղաւորեցին, խամբած աչքերով, թռչունած ու վտիտ մարմնով մօրաքրոջս աղջկան:

Մօրաքրոջս ապրում էր հարեւան գիւղում, իր հիւանդ երեխային բուժելու համար քաղաք էր տարել եւ հիմա գիւղ էր վերադառնում:

Բալիկին մեզ սօտ բերեցին, քանի որ իրենց գիւղի ճամբան փակ էր եւ մինչեւ ձնհալը պէտք էր որ մեզ հետ ապրէին...

Օրեր անցան: Բալիկը միշտ պառկած էր: Դժուար էր խօսում, դժուար էր շարժում, չէր ծիծաղում չէր էլ խաղում...

Անցան օրեր ու շաբաթներ... Բալիկին առանձին ու աւելի լաւ էին կերակրում եւ նրա մնացած կերակուրն էլ փոխանակ մեզ տալու, մեր աչքից հեռու էին պահում:

Ես ու եղբայրս՝ Հրօ-ն դժգոհ էինք եւ տխուր այդ բանից:

Դարձեալ օրեր ու շաբաթներ անցան: Ամէն ինչ մնում էր նոյնը:

Մի օր Հրօ-ի ձեռքից բռնած մտայ մառան: Այնտեղ տեսայ մի աման մէջը ապուրի մման մի բան, երեք խնձոր մէկը կծած եւ մի շարք ուրիշ ուտելիքներ, որոնցից մեզ

չէին տալիս: Դրանք Բալիկինն էին: Ինչ ուտելիք էր մառանում կար, ամէնից մի քիչ համտես արեցինք: Եւ սա կրկնեց անգամներ:

Գարնանամուտ էր: Մեր տնում շփոթ առաջացաւ: Մարդիկ էին հաւաքել: Ոմանք արտասում, ոմանք էլ լուռ էին: Իսկ մօրաքրոջս գոռում-գոչումը մեր ողջ տունն էր լցրել: Ես էլ էի հեկեկում, բայց ինչո՞ւ չգիտէի...

Այդ օրւանից, թոնրի շրթին ոչ Բալիկ կար եւ ոչ էլ իր անկողինը... Բայց ես փնտռում էի նրան...

Մանկութեան տարօրինակ աշխարհ: Այդ խառնիճադանձ վիճակում, երբ ամէն տեղ լաց ու կոծ էր, կրկին անգամ Հրօ-ի ձեռքից բռնած մտայ մառան: Այնտեղ ուտելիքներից բացի դուռն էր նաեւ Բալիկի անկողինն ու հագուստները: Մի պահ շարեցի, չգիտէի ինչ անել. Բալիկին էի փնտռում, չէ՞ որ նրա հագուստներն ու անկողինը այդտեղ էին... մտածում էի ուր որ է նա դէմս կելնի (կը կանգնի) ու մենք միասին այդ ուտելիքներից կուտենք նոյնիսկ կը խաղանք միասին... բայց նա չեկաւ. եւ այլեւս այդ ուտելիքներից չկերայ: Անշարժ կանգնած մեխել էի տեղումս, չգիտէի ինչ անել... յանկարծ Հրօ-ի ձայնից ըստափեցի... «ուզում եմ, ուզում եմ» անդադար կրկնում էր նա: Դարահատուած նրա ցանկութիւնը կատարեցի, աշխատելով Բալիկի զգեստի գրպանից գետին թափած չիր, նուշ ու չամիչից մի քիչ հաւաքել ու տալ նրան... եւ չկերայ:

Բայց լացում էի ու լացում...

Մառանում էինք երբ մայրս ներս մտաւ եւ հասկացաւ կատարածը: Մայրս մի վայրկեան մնաց շուր ու մոլոր ու յետոյ տարօրինակ ճիչ արձակեց.

-Վայ, վայ աման...

Մայրս ինչո՞ւ ճչաց, բան չհասկացանք-, Ախր մեր արածի մէջ վատ բան չկար: Մտածում էի:

Մէկ տարի անցաւ. Հրօ-ն հիւանդ էր: Նրան քաղաք չըտարան. հայրս գործով Թեհրան էր գտնում: Իր ուղարկած դրամն էլ դեռ չէինք ստացել. մէկը չկար օգնելու, մեռնակ էինք...

Վաղ առաւօտ էր, մայրս ինձ արթնացրեց.

-Արծնակ, վազիր փեսայ Նեսօ-ին կանչիր, թող գայ:

Եկաւ փեսայ Նեսօ-ն՝ մեր գիւղի յարգուած ու դժարութիւն հարթող տարեցներից մէկը:

Տանիքից ցած շիջայ կտորի ծայրին նստած, մեր պատշգամբի անց ու դարձն էի դիտում:

Պատշգամբում մի տախտակ տեսայ եւ յետոյ էլ տեսայ փեսայ Նեսօ-ն Հրօ-ի փոքրիկ մարմինը գրկած դուրս բերեց թոնրատնից ու դրեց այդ տախտակի վրայ եւ սկըսեց ջուր ցանել վրան: Հրօ-ն չարժեց բայց նրա փայլուն կապոյտ աչիկները առանց թարթելու ինձ էին նայում: Բալիկը այդ աչքերը ինձ երկար չնայեցին, փեսայ Նեսօ-ն ձեռքով փակեց նրա աչքերն ու յետոյ էլ փաթաթեց սպիտակ կտորի մէջ:

Ապա բերեցին մի տախտակէ տուփ, որի մէջ տեղաւորեցին Հրօ-ին ու կափարիչն էլ վրան դնելով մեխեցին ու տարան... բայց որտե՞ղ... ոչինչ չհասկացայ, միայն մայրիկիս աղերսագին լացն ու կոծն էի լսում որ հարայ էր կանչում.

-Բալիս մի՛ տարէք,-բալիս մի՛ տարէք...

Մշակոյթ

Կտուրի պոնկին անշարժացած նստած դեռ շարունակում էի մեր տան անցողաբար դիտել, բայց յանկարծ, միանգամայն մի կցկտուր ճիչ արձակելով կտուրի ծայրից պոնկեցի ու վազեցի դեպի մայրիկս ու նրա փեշից կախելով ուզում էի իր հետ գնալ, բայց ինձ չտարան: Այդ միջոցին մեր դրացու հարսը, գուրգուրելով աշխատեց ինձ մայրիկիցս բաժանել ու տուն տանել: Տնում ամեն ինչ լուռ էր ու տխուր: Ամեն ինչ նայել: Միայն Հրո-ն չկար: Բալիկի անկողնու նման, նրա անկողինն էլ էին հաւաքել ու մի կողմ դրել ու միայն փայտից սարքած իր ճի-խաղալիքն էր որ մի անկիւնում ընկած իր տխուր աչքերով ինձ էր նայում ու կարծես հարցնում էր ո՞ր է Հրո-ն...

Երկար ժամանակից յետոյ, երբ արեւի մեծացայ, հասկացայ թէ ինչ կատարեց Հրո-ի հետ ու որտեղ տարան նրան:

Տարիներն իրար յետեւից սահեցին ու անցան: Մեծացայ, դարձայ պատանի, յետոյ երիտասարդ ու յետոյ էլ... յետոյ էլ... բայց երբէք չեմ կարողացել իմ յուշերի մատնանից ջնջել Հրո-ի կապոյտ աչիկները, որոնք փակեցին չիր ու չամիչի ու խնձորի կարօտ...

Շատ վաղ գնաց Հրո-ն...
Արդեօ՞ք նրա անդարձ ճամբան սկիզբ առաւ Բալիկի ոտելիքներից, թէ...

Ախր Բալիկը թոքախտ էր:

Ինչ լաւ կը լինի որ աշխարհի մանուկները երբէք չհիանդանան ու երբէք չիր ու չամիչ ու խնձորի կարօտ չմնան... ■

Ստացած գրքեր Շնորհակալութեամբ ստացել ենք հետեւեալ գրքերը

- 1- «Կարեն Դեմիրճյան», Հայագիտակ, «Հուշանվերային հրատարակութիւն», Երևան 2000թ. մեկեմաս և խմբագիր Ռիմա Դեմիրճյան, Հայերեն- ռուսերեն- անգլերեն 440 էջ:
- 2- Iran & Caucasus, Research papers, "Caucasian Center for Iranian studies, Yerevan", Vol. 3-4, Editor G. Asatrian., Yerevan, 1999-2000 452 pages.
- 3- James Bryce and Arnold Toynbee, "The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916, Gomitas Institute, Princeton, New Jersey USA, 2000, 667p.
- Մեկեմաս Մեղա և Դոկտոր Ռոստոմ Ստեփանեաններ
- 4- Dr. Zareh Hovanesian, The Philatelic History of Armenian, Հայկական, մամականիշերի ժողովածու, New Jersey USA, 2000, 357p.
- 5- Tracy Aktinson, Harpoot Diaries, 1908- 1917 Gomitas institute, New Jersey, USA 94p.
- 6- Ասատուր Յարութիւնեան, «Բուրաբի գաւառի յայտնի ուսուցիչը Կարաղանում», Թեհրան, «Նայիրի» հրատ. 2000թ.
- 7- Աշոտ Ալլահվերդեան, «Մալմաստ», Երևան 1999:
- 8- Ներսես Տ. Մետրոպեան(Բալայեան), «Չմռան շեմին» (բանաստեղծութիւններ), Գեղդէր, Ամն, 2000թ.
- 9- Սարգիս և Մեղա Տեմիրճյան, «Կեանք ա Մեր ա», Միշիկըն, Ամն, 2000թ.
- 10- Լ. Գ. Մինասեան, «Բարեգործ և մեկեմաս Ջուղայեցիներ», Նոր Ջուղա, 1997:



Ճ»ճՅ 1/2Յ Կ. ՏԵՂԵՒ! -ՇԿ

-Այօ

-Խօսում է Վաչէ Հախնազարեանը ԱՄՆ-ից

-Լսում են Չեզ

-Ցանկանում են, նախ թեկուզ շատ ուշացումով շնորհաորել ձեզ՝ «Լոյս»-ի հրատարակման առթիւ: Պէտք է խոստովանեմ, որ երբէք չէի սպասում, իրանահայերին կը յաջողի նման բարձրորակ եւ հարուստ թերթ հրատարակել:

Չեր երկշաբաթաթերթը անձիս կարծիքով չի զիջում միջազգային մանատիպ որեւէ թերթի: «Լոյս»-ը իրօք բազմաբնոյթ է եւ մանաւանդ անաչառ: Յատկապէս ինձ շատ դուր է գալիս ձեր հասարակական մեկնաբանութիւնները եւ առողջապահական յօդածները, որոնք արտացոլում են վերջին բժշկական տեղեկութիւնները, արեստում վերլուծութիւնները եւ նրան ամնչուող հարցազրոյցները, համայնքից փոխանցած նորութիւնները: Այնպէս, որ ցանկանում եմ «Լոյս»-ը միշտ լոյս սփռի եւ նրա ճառագայթները երբէք չմարեն:

ՅԿՅձձ »Կ՛ն Ս»Կ՛ն Ս»ճ Օ»ճնձձ
Յ ՕՅ ճՅ ՕձձՍ Ս»ճ Ե»1/2ձձԿ

Կարծում եմ Իրանում շատ քիչ հայկական *ամուն, ազգանուն* կը գտնէք որ ինքնութեան թրթի մէջ ճիշտ գրած լինի: Պատճառները շատ են: Նախ անցեալ շրջաններում ճնշումներ գործադրելով՝ աշխատում էին մի որեւէ կերպ *եան*-ը վերացնել կամ մի որեւէ բան արեւալցնել հայկական ազգանուններին եւ այլն:

Երկրորդ՝ հայերէն լեզուի ճոխ հնչիւնների շարանն է, որ ուրիշ լեզուի մէջ գոյութիւն չունի եւ արտասանելիս եւ գրելիս մի ուրիշ հնչիւնով է գրում: Օրինակ՝ *ճ, ձ, ծ, պ, ա, կ,* եւ այլն, իսկ երբ պարսկերէն է գրում միանգամայն ուրիշ բան է հնչում, օրինակ՝ *Պեարոս*, որ գրում է *Փեթրոս* եւ այլն:

Այս դեռ հարցի սկիզբն է, երբ այս անուններն անցագիր (պասպորտ) ստանալու համար գրում է լատին տառերով, դարձեալ փոփոխութեան է մատնում:

Կարելի է մտածել, որ ուրիշ ելք չկայ, մենք ինչ լեզուներին չենք կարող ստիպել՝ մեր հնչիւնները եւ համապատասխան նշանները ունենալ:

Հարցը այսքանով չի վերջանում: Երբ մի հայ, որ արդէն իր անունը եւ ազգանունը պարսկերէնով աղաւաղած է գրած եւ լատին տառերով գրելիս մի անգամ եւս փոփոխութեան է ենթարկել, ուզում է Հայաստանի կացութեան յատուկ կարգավիճակ ստանալ եւ իր անուն եւ ազգանունը թարգմանում է ըստ լատին տառերով՝ անցագրում գրած ձեւով. այսինքն՝ *Յողիկ* եւ *Ճաղկուշ* անունները պարսկերէնով գրում է *Սոխիք* եւ *Սախոշ*, անգլերէնով գրում է *SOKHIK* եւ *SAKHOSH* եւ յետոյ հայերէնով Հայաստանի անցագրում գրում է *Սոխիք* եւ *Սախոշ*:


Արդեօք որեւէ ճա՞ր չկայ. Կարծում եմ կարելի է մի ելք գտնել: Ափսոս է հայոց լեզուի սիրուն անունները մեր ձեռքով հայկական անցագրում սխալ եւ տգեղ գրեն: Մի քիչ որ մտածենք ելքը կը գտնուի. Օրինակ՝ կարելի է ինչպէս ընդունած է անցագրի վերջին էջում, որպէս տեղեկութիւն աղաւաղած անունների ճիշտը գրել:

Վիգէն Սուրադեան - Թեհրան

Հարցազրույց իրանահայ սիրուած երգիչ՝ Դրո Բարսեղեանի հետ

**Կը խնդրենք նախ ներկայանալ մեր
ընթերցողներին:**

-Դրո Բարսեղեան, ծնել եմ 1969-ին Թեհրանում, սովորել եմ Վաչէ Յովսէփեան, յետոյ Ալիշան (ուղեցոյց) դպրոցներում, ապա «Ռեսալաք» տեխնիկական ուսումնարանում: Այնուհետեւ օդաչուութեան ուսումնարանի չորս տարւայ կուրսը եմ աւարտել: Եթէ ձեզ հետաքրքրում է՝ ծնել եմ Ջուղայի նահապետական մի ընտանիքում եւ ամուսնացած չեմ:



Ո՞րն է Ձեր ժամըրը երաժշտութեան մէջ, եւ ի՞նչն էր ընտրութեան պատճառը :

-Էստրադայիւնը, քանի որ պահանջ կար, հայ Էստրադայիւն երգը, ընդհանուր աշխարհում ճանաչւած է: Էստրադայիւնը ընդհանրապէս հայ մշակոյթից է սկսել եւ այն հայկական ստեղծագործութիւն է, սահասիկ իմ ընտրութեան պատճառները:

Ի՞նչպէս եղաւ որ երգիչ դարձաք, արդեօք դա պատահակա՞ն էր:

-Ոչ, ես երաժիշտ ընտանիքում եմ ծնել: Հօրեղբայրս եւ մօրեղբայրս երգիչ են եղել, նամանաւանդ փոքր մօրեղբայրս, որ իմ առաջին երգուսույցն է եղել, բարձր կրթութեան տէր էր երաժշտութեան ասպարէզում եւ դասում էր մեծ գուսանների շարքին:

Այսօր նկատում ենք, որ հայ երաժշտութիւնը դժբախտաբար աղաւաղուում է: Ի՞նչ միջոցներ է կարելի կիրառել այդ անցանկալի երեւոյթը կանխելու համար:

-Միջոցներ շատ կան: Պիտի տեսնենք որ միջոցն է աւելի յարմար: Ամենակարեւոր միջոցներից մէկը՝ նմանատիպ աղաւաղուած երգերը բեմերից հնչելու կանխարգելումն է:

Արդեօք չէ՞ք գտնում, որ պատշաճ քարոզչութիւն պէտք է տրի:

-Գիտէք, ես թէ՛ իմ ընտրած երգերով եւ թէ՛ իմ տւած բացատրութիւններով արդէն նպատակ եմ այդ գործին, բայց ցաւօք այնպէս է տեղ ընկել, որ աղաւաղուած երգեր երգողները աւելի շատ են քան բարձրանում: Արդէն մեր ժողովուրդը, դժբախտաբար ընտելացել է այդ աղաւաղուած երաժշտութեան հետ: Միայն սրբագրելու համար մեծ ջանք է պահանջուում եւ առաւել եւս՝ միասնականութիւն եւ համագործակցութիւն: Այսօր Եւրոպայում եւ Ամերիկայում օպերայի սրահները միշտ դատարկ են մնում, անգամ խմբերը իրենց աշխատանքները դադարեցնում են: Պէտք է ասել ընդհանրապէս սա համաշխարհային խնդիր է: Ուղղակի մշակութային ասպատակում է տեղի ունենում:

Դուք ընդգրկել էիք Իրանի քաղաքակրթութեան երկխօսութիւնների ընտրուած երգիչների ցանկի մէջ ու նաեւ ուրախութեամբ տեղեկացանք, որ նրանց կազմակերպ-

ւած մրցութիւններում արժանացել էք լաւագոյնների շարքին: Ի՞նչ կասէք այդ մասին:

-Ես միայն կարող եմ ասել՝ ինձ համար հիմնադրուած երաժշտութիւնն է կարեւոր, Իրանում լինի թէ Հայաստանում: Ես աշխատում եմ երաժշտութեան ծառայելու նպատակով եւ երբէք չեմ ուզում երաժշտութիւնը դարձնել որեւէ հասոյթի կամ դրամական խնդրի առարկայ: Մարդը եթէ երաժիշտ է՝ պէտք է մտածի ուղղակի երաժշտութեան եւ ճիշտ երաժշտութիւն տարածելու համար:

Դուք կարծում էք նմանատիպ ձեռնարկները ի՞նչ-քանով օգտակար կը լինեն մեր համայնքին:

-Մենք որպէս փոքրամասնութիւն կարող ենք շատ ասպարէզներում ներկայանալ, այնպէս որ մեր արեւստագետները եւ արեւստին նւիրած մարդիկ, որ մասնակցել են որեւէ մրցոյթի՝ ցանկալի արդիւնքների են հասել, ուրեմը մենք պէտք է երաժշտութեան մէջ էլ ունենանք նոյն մարդիկ: Դժբախտաբար ես ողջ մասնակիցների մէջ ինձ մենակ զգացի: Նրանց համար ցանկալի կը լինէր, որ ուրիշ հայեր էլ մասնակցէին: Առահասարակ, լաւ կը լինէր, եթէ մենք ունենայինք մի մասնակցող հայկական բաժին:

Առհասարակ, երգիչները որեւէ երգչի ընդօրինակում են: Դուք ո՞ր երգչին էք սիրում եւ ընդօրինակում: Կը ցանկանայի՞ք որեւէ երգիչի մակարդակին հասնել:

-Ես շատ երգիչների եմ հետեւել, սակայն դա չի նշանակում, որ ես պիտի ուղղակի ընդօրինակեմ նրանց: Ես շատ եմ սիրում մեր յայտնի երաժշտագետներին, օրինակ՝ Առնօ Բարաջանեանին, Ռայիսա Սկրոչեանին, Գեորգ Սինասեանին, իրանահայ հանրայայտ երգիչ՝ Վիգէնին, Յովհաննէս Բաղալեանին, Ռուբէն Մատթէոսեանին եւ...:

Որպէսզի մեր համայնքի երաժշտութեան մակարդակը բարձրանայ, ի՞նչ առաջարկներ ունէք:

-Երաժշտութեան դաստիարակութիւնը պէտք է ընտանիքից սկսի, աւելի շուտ ծնողները պիտի ճիշտ ուղղութիւն տան: Մարդը մօրից երաժիշտ չի ծնում, պիտի ճիշտ ասպարէզ ստեղծի, որպէսզի երաժիշտը կարողանայ ճիշտ ուղղու վրայ քայլ վերցնի: Գրա հիմքը ընտանիքում է դրուում: Այնուհետեւ ինքը՝ անձն է, որ պէտք է մշակի իր անելիքը: Երաժշտութիւնը շատ նուրբ արեստ է, եւ եթէ մենք դրանով համոզուած ենք, ուրեմն պարտաւոր ենք նրա նկատմամբ նրբանկատ լինել:

Երաժշտութիւնից բացի ի՞նչն է Ձեզ հրապուրում:

-Նկարչութիւնն ու օդաչուութիւնը:

Ձեր պատգամը մեր երիտասարդներին:


-Միայն կարող եմ ասել առաւել ուշադրութիւն դարձնեն հայ մշակոյթին՝ պարին, նկարչութեանը, քաղոպին եւ այլին: Եթէ ընտրում են երաժշտութիւնը, նրա տարածելու համար ընտրեն ճիշտ ճանապարհը: Այսօր հարսանիքներում ներկայանալով, երգելով կամ որեւէ ուրախութիւնում ինչ-որ անկապ երգեր երգելով ոչ-որ երաժիշտ չի դառնում: Մենք մեր հայերէն երաժշտութեան մէջ ունենք տարբեր ժանրեր՝ էստրադային, ժողովրդական, դասական եւ... որոնք շատ հարուստ են: Մենք որեւէ լրացուցիչ երաժշտութեան, որը պիտի գայ օտարներից կարիք չունենք: Այսօր աշխարհի երաժշտագետները շատ բարձր են գնահատում մեր մշակութային մակարդակը, բայց ցաւօք՝ մեզանից ոմանք ընկել են խորք եւ բոլորովին անհարազատ երաժշտութեան ետեւից:

Մշակոյթ

Իմ մանկութեան տարիներին դժար էր որեւէ երգացանկ գտնել, իսկ հիմա ընդհակառակը կարող ես ցանկացած պահին կապ հաստատել Հայաստանի՝ ցանկակած երգչի կամ երաժշտական խմբի հետ եւ խնդրել քեզ ներկայացնի անհրաժեշտ գիտելիները:

Այս օրերին Հայաստանից յաճախ ցածրորակ խմբեր են հրաւիրում Թեհրան՝ ելոյթ ունենալու, որոնք Հայաստանի վայել բարձր մակարդակ չեն ներկայացնում: Դուք ի՞նչ կարծիքի եք: Երկրորդում եք ինձ:

-Ես Ձեր ասածը երկրորդում եմ: Դա ճիշտ է: Մենք պէտք է մշակոյթի ասպարէզում հասնենք այն մակարդակին, որ միայն ու միայն լաւագոյններին ընդունենք:



Դուք ակնարկեցիք «Մշակութային ասպանդակութեան»-ը: Դրա առաջն առնելու համար ի՞նչ պէտք է անել:

-Կանգնած ենք մի գաղութի դիմաց, որ շատ սպասելիքներ ունի երաժիշտներից, բայց այդ սպասումները պիտի ճիշտ սպասումներ լինեն:

Այսօր որոշ երաժիշտներ 100 տոկոսով ենթարկում են ժողովրդի պահանջներին: Այդ բոլոր պահանջները, իհարկէ կատարելը ճիշտ չէ: Պէտք է իրականացնել դրանց այն մասը, որ նպաստում է իրական երաժշտութեանը: Մեր օրերում տարբեր միջոցներով մեր ժողովրդին հրամցելում է այլազան երաժշտութիւն, որոնց մեծ մասը, ինչպէս ակնարկեց վնասաբեր են: Համակարգը պէտք է ենթարկի արեւտագէտին եւ ոչ թէ ընդհակառակը:

Մենք այսօր կարող ենք, մեր անցեալի բոլոր ստեղծագործութիւնները ներկայացնել նոր կատարումներով առանց իմաստը փոխելու:

Արդեօք Դուք անձամբ փորձե՞լ եք ձեր գիտելիքները փոխանցել ուրիշներին:

-Այո, ես ունեցել եմ ծրագրեր եւ ասպագայում էլ կունենամ: Դպրոցներում ես երգչախմբեր եմ կազմակերպել: Կարճ ժամանակահատուածում փորձել եմ աշակերտներին հրամցնել մեր երաժշտութեան ովկիանոսից գոնէ մի քանի կաթիլ: Փորձել եմ նաեւ սովորեցնելու, թէ՛ ինչպէս պէտք է ծանօթանալ ճիշտ երաժշտութեան հետ: Էստորադային եւ ժողովրդական երգերի ելոյթներ եմ կազմակերպել: 1995-ին կազմակերպել եմ «Շիրակ» Էստրադային երգի խումբը, որի մէջ ինձ օժանդակեցին Թեհրանի երկու լաւագոյն երաժիշտներ՝ Ա.Ասատրեանը եւ Հ. Հախվերդեանը: Խումբը երեք հոգով իր աշխատանքը սկսեց, իսկ հետագայում համալրեց այն եւ դարձաւ 9 հոգի: «Շիրակ»-ը միակն է Իրանում, որ իր բոլոր հանդիպումներում հնչեցրել է Էստրադային երաժշտութիւնը:

Ձեր երաժշտական ասպարէզում, արդեօք դասընթացների՞ք եք մասնակցել:

-Եօթ տարեկանում իմ առաջին ուսուցիչն է եղել հորեղբայրս՝ Համիկ Բարսեղեանը, եկրորդը պրն. Ժոռա Մինասեանը, վերջում էլ պրն. Գուրգէն Մովսիսեանը, որն արդէն մեծ համբաւ ունի Իրանում: Իսկ ինչպէս ասում են այն-ինչ խմորում պիտի պատրաստւէր, որպէսզի ես իրականից կարողանայի երգել եւ ճիշտ երգել՝ պրն. Տիգրան Մուքիասեանի ջանքերով է եղել՝ 12 տարւայ ընթացքում: Մասնակցել եմ տարբեր երգչախմբերի աշխատանքներին, իսկ յետոյ գիտակցաբար ընտրել եմ Էստրադային երաժշտութիւնը:

Ձեր ընտանիքում որեւէ արգելք արեւտի նկատմամբ չի՞ եղել:

-Ոչ, որեւէ արգելք չի եղել, միշտ քաջալերանք է եղել: **Արդեօք չէ՞ք ուզում «քաջութեան» դիմել եւ ամուսնանալ: Համատեղ կեանքին ի՞նչպէս եք նայում:**

-Որեւէ կարծիք չունեմ, որովհետեւ ամուսնացած չեմ: Դա կեանքի մի ուրիշ տեսակն է, բայց լրի կեանքը չէ:

Կը ցանկանայի՞ք Ձեր ասպագայ կեանքի ընկերը արեւտի մարդ լինի թէ՞ ոչ:

-Պէտք է ամուսնանալ այնպիսի մարդու հետ, որ գոնէ 70 տոկոսով հասկանայ քեզ, եւ դու էլ նրան: Միրելը՝ ամուսնութեան մէջ շատ դեր է կատարում, չպիտի ամուսնութիւնը դառնայ սովորութիւն: Կեանքը պիտի սիրել: Եթէ երկու արեւտագէտ իրար հետ ամուսնան եւ իրար սիրեն, սիրելով աշխատեն, կունենան շատ իղէպ եւ համերաշխ կեանք: Եթէ գոյգերից մէկը արեւտից շատ հեռու մարդ լինի եւ չկարողանայ իր կեանքի արեւտագէտ ամուսնուն հասկանալ, հաւանաբար մեծ խնդիրներ կը ծագի նրանց



կեանքում: Ամէն դէպքում պէտք է մէկը միւսի նախասիրութիւնն ու համոզմունքները հաշի առնի եւ յարգի:

«Ճաւնդ» ասած բառին ի՞նչպէս եք մօտենում:

-Ընդհանրապէս հոգեկան ուժերը մարդու հետ աշխատում են արթուն եւ քնած ժամանակ, մի առակ կայ, որ ասում է. « Ինչից վախենաս, գլխիդ կը գայ»: Եթէ մէկը ամուսնանում է արեւտագէտի հետ եւ խանդ է առաջանում՝ դա վախից է:

Եթէ նորից ծնւէք ի՞նչ կանէք:

-Եթէ նորից ծնեմ, դարձեալ երաժիշտ կամ օդաչու կը դառնամ: ■

Հարցազրոյցը վարեց Թամիկ Քելիշեանը

Մշակոյթ

«Լոյս»-ի նախորդ համարներում հրատարակեցինք հայերէնի դասական ուղղագրութեան կանոնները: Այժմ յարգելի ընթերցողին ենք ներկայացնում հայերէնի նոր ուղղագրական կանոնները եւս, որպէսզի նա ամբողջական տեղեկութիւն ունենայ հայերէնի ընդհանուր ուղղագրութեան մասին: Որպէս աղբիւր օգտուել ենք «Ուղղագրական համառոտ բառարան»-ից, տպագրուած Թաւրիզի, Ատրպատականի Յայոց Թեմակահի տպարանում 1945թ.:

Խմբ.

Ուղղագրութեան ամենակարեւոր կանոնները

Պրոֆ. Արարատ Ղարիբեան

1. Ը ձայնաւորի ուղղագրութիւնը

1. Բառասկզբում եւ բառավերջում ը ձայնաւորը գրուում է, երբ արտասանուում է. օրինակ՝ ընկեր, ընդունել, ընտրել, ընծա եւ այլն, գիրքը, Լուսիկը, բակը, Գրիգորը, դպրոցը եւ այլն:

2. Բառասկզբում սկ, սպ, ստ, սք, սի, սք, շկ, շպ, շտ, զք, զգ կապակցութիւններից առաջ, թէւ արտասանուում է մի թոյլ ը, բայց չի գրուում. օրինակ՝ սկսել, սկիզբ, սպիտակ, ստեղծել, ստուգել, սքանչալանալ, սփռիչել, սքափվել, շկուլա, շպարել, շտայել, զքոսնել, զգալ եւ այլն:

Ըստ նախդիրը կազմում է բացառութիւն:

3. Բառավերջի ը ձայնաւորը փոխուում է ճ բաղաձայնի, երբ յաջորդ բառն սկսուում է ձայնաւորով եւ կամ սկ, սպ, ստ, սք, սք, սի, շկ, շտ, շպ, զք եւ զգ կապակցութիւններով. օրինակ՝

Աշակերտը կարդում է: Կոլտնտեսությունը ցանում է: Կոլտնտեսականը կարդում է: Պիոները քայլում է:

Բայց՝

Աշակերտճ ասում է: Պիոներճ անցնում է: Կոլտնտեսությունճ աւարտում է ցանքսը: Կոլտնտեսականճ աշխատում է:

Նոյնն է ե՝

Բանվորը ղեկավարում է մեքենան: Աշակերտը մըտնում է դասարան:

Բայց՝

Բանվորճ զբոսնում է՝, աշակերտճ սպասում է ուսուցչին եւ այլն:

Այս կանոնը, սակայն, աւելի բարեհնչիւնութեան արժէք ունի, քան ուղղագրական, ուստի կարելի է թէ՛ ը գրել եւ թէ՛ ճ:

4. Բառամիջում սովորաբար ը ձայնաւորը թէւ լսուում է, բայց չի գրուում.

օրինակ՝ Սկրտիչ, պրպտում, քաղցր, ծանր, գլուխ:

Նախածանցաւոր եւ բարդ բառերի մէջ ը ձայնաւորը գրուում է, եթէ ածանցող բառը եւ կամ բարդող բառերից վերջինն սկսուում է ը ձայնաւորով. օրինակ՝

ընթաց-նախաշնթաց. ընդունելի-անընդունելի. ընկեր-դասընկեր. ընտիր-հատընտիր. ըստ-օրըստօրէ. ընդ-խոնջընդոտ եւ այլն:

5. Տողադարձի ժամանակ թէ՛ մնացող վանկերից վերջինի եւ թէ՛ միւս տողն անցնող վանկերից առաջինի մէջ արտասանուող ը ձայնաւորը գրուում է. օրինակ՝

Սը-կըտիչ, Մկը-տիչ, կոլտըն-տեսական, ծա-նըր եւ այլն:

Եթէ յաջորդ տողն անցնող ամբողջական բառ է, ը կարելի է գրել կամ չգրել. օրինակ՝ շահա-խնդիր, հաստա-գլուխ կամ շահա-խընդիր, հաստա-գըլուխ:

2. ԻԱ, ՅԱ երկհնչիւնների ուղղագրութիւնը

Իա երկհնչիւնը շփոթում է յա երկհնչիւնի հետ, ուստի պէտք է յիշել հետեւեալ կանոնները.

1. Հայերէն կամ հայացած բառերի արմատների մէջ իա կապակցութիւնը գրուում է հեքիասք, դաստիարակ, Սուքիաս, Մարիաս, կրիա եւ ծիածան բառերի մէջ:

2. Իա գրուում է ձի, թի, լի, հի, մի, դի բառարմատների եւ աջի կամ ի վերջաւորութիւն ունեցող բառերի բարդութեան եւ ածանցման ժամանակ. օրինակ՝ ձ/աւոր, թ/ակ, լ/առատ, հ/անալ, մ/ակ, գիւղացիական, արդ/ական եւ այլն:

3. Իա գրուում է երոպական եւ այլ լեզուներից փոխ առնուած բառերում կամ երկիրների յատուկ անուններում. օրինակ՝

պրոլետարիատ, սոցիալիզմ, մատերիալ, քիմիա, Անգլիա, Գերմանիա, Իտալիա եւ այլն:

4. Մարդկանց յատուկ անունների վերջում գրուում է յա, օրինակ՝ օՏելիա, Վոլոդիա, Ամալիա, Վիկտորիա, Լյուսիա, Մանիա եւ այլն:

Ծանօթ. Յատուկ անունների շեշտած վերջնական իա-ն գրուում է իա, օրինակ՝ յիա, Մարիա, եւ այլն:

Այլ դէպքերում հայերէն բառերի մէջ յա լուելիս գրուում է յա. օրինակ՝

սենյակ, մատյան, պաշտոնյա ոսկյա, փայտյա եւ այլն:

5. Ույ երկհնչիւնը բառարմատների ածանցելու եւ բարդելու ժամանակ սովորաբար վերածուում է պարզ ա ձայնաւորի. օրինակ՝

ծուլ-ծուլանալ, թուլ-թուլակազմ, թուլութիւն, բուլ-բուլալետ, ստուղ-ստուգում-ստուգատես եւ այլն:

Նոյն բառը չի ենթարկուում այս օրէնքին (նույն- նույնություն): ■

Խաչքառ համար 16-ի լուծած տարբերակը

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	ս	ե	ր	օ	խ	ա	ն	գ	ա	դ	ե	ա	ն	■	ա
2	ա	ր	■	դ	ա	ն	ա	■	ա	ն	ը	ա	ն	ք	
3	դ	ե	դ	ա	տ	ն	ճ	ս	■	ե	կ	ա	ն	ու	տ
4	ե	ճ	■	կ	ու	ր	ա	ն	ա	լ	■	կ	ա	ն	■
5	դ	ի	փ	■	տ	ա	կ	ա	օ	■	կ	ի	գ	ու	ճ
6	հ	ա	ր	ս	ի	կ	■	ն	ա	խ	■	ց	■	ճ	ա
7	ե	■	փ	ա	կ	■	ա	կ	ն	ո	ց	■	դ	ա	ր
8	դ	ու	ր	ս	■	ա	դ	■	ց	լ	ա	ճ	ա	ր	տ
9	ա	ր	ա	տ	ա	բ	ա	ն	■	ա	լ	ա	տ	■	ի
10	յ	■	լ	ի	ն	ե	լ	■	ա	պ	ա	օ	■	ի	կ
11	ա	կ	■	կ	ա	դ	■	ս	ր	ա	կ	ա	ն	ց	■
12	ք	ա	փ	■	ճ	ա	ր	գ	ա	ր	ի	ն	■	լ	ք
13	■	յ	ե	տ	ո	յ	■	ա	ր	■	ց	■	2	ա	խ
14	բ	ա	ր	ի	ք	■	ե	լ	ա	կ	■	ս	ի	ն	ա
15	ա	ն	ի	լ	■	ք	ր	ի	տ	ա	ն	ի	ա	■	ճ

Առողջապահական

Վերջին տեղեկություններ կրծքի քաղցկեղի կապակցությամբ (Երկրորդ բաժին)

Harvard woman's health watch
Թարգմ. Լեւոն Սիսյան



Մխտորոշում եւ վաղահաս բուժում- Կար մի ժամանակ, երբ կրծքի քաղցկեղի առկայության մասին կանայք տեղեկա-նում էին այն պահին միայն, երբ կոշտութիւնը արդէն բաւականին խոշոր եւ շոշա-փեղի էր լինում, ուստի մնում էր միայն մէկ ելք՝ վիրա-հատել եւ հեռացնել ամբողջ կրծքի գեղձը կամ ստիճքը: Մակայն ժամանակի ընթացքում ձեռք են բերել կրծքի քաղցկեղի զարգացման ընթացքի առաւել խորն ըմբռնողութիւն եւ այստեղ կանոխ երեսան հանելու եւ առաւել արդիւնատուրութեամբ բուժելու ուղիներ: Հիւանդութեան կանուխ յայտնաբերումը նաեւ վիրահատներին հնարա-տրութիւն է ընձեռնել, որպէսզի անաղարտ պահի կրծքի արտաքին տեսքը:

Կրծքի քաղցկեղի յայտնաբերումը- Կրծքի քաղցկեղը յաճախ չի դրսեւորում որեւէ այստանշան մախնական փոփոխում, ուստի վաղահաս յայտնաբերման միակ յոյսը մնում է դիմել *մամոգրամի* օգնութեան, 40 տարիքը թեւ-կոխելուն պէս: *Մամոգրամի* օգնութեամբ կարելի է նրշ-մարել կրծքի քաղցկեղի 80% -ից 90%-ը: Նոյնիսկ եթէ ուռի տրամագիծը լինի 0.5 սանտիմետր (սա): Մնացեալ 10%-20%-ը սակայն խոյս է տալիս *մամոգրա-Ֆիայից*: Կանայք, ուրեմն իրենք պիտի քննեն կոշտութիւններ գրտ-նելու համար եւ *մամոգրամներ* կատարել տան մասնա-գէտի միջոցով, տարեկան մէկ անգամ: *Մամոգրա-Ֆիան* առաջնահերթ քայլ է համարում կրծքի կասկածելի կոշ-տերի եւ այլ անօրինաչափութիւնների արժեքատրման գծով՝ ճշտորոշելով կոյտերի վայրը, ձեւը, եզրը եւ հաւա-նական որեւէ կրացում (calcification), որոնցից վերջինը երբեմն կապակցում է կրծքի քաղցկեղին:

Ամերիկայի Շողարանների Կոլէջը ձեռնարկել է զե-կուցման մի օրինաչափ (standard) սիստեմ, որը *մամո-գրա-Ֆիայի* արդիւնքը հաւասարապէս հասկանալի է դարձնում բոլոր շողարան բժիշկների ու նոյնիսկ այդ քննութեանը ենթարկած



կանանց համար-անկախ նրա-նից թէ ո՞ր կենտրոնում է կատարել քննութիւնը:

Երբ *մամոգրամը* ցոյց է տալիս մի կոյտի, կիստի կամ կրացման առկայութիւն, կամ երբ բժիշկը գտնում է կասկածելի մի կոյտ, նա կուզենայ կատարել ւսելի խոր, յա-ւելեալ քննարկումներ: Գեր-ձայնային քննչական մետոդ-ներով յաճախ կարելի է զատորոշել պարզ, ոչ-քաղցկե-ղային կիստը, բարդ եւ քաղցկեղային կիստից: Բժիշկ-ները յաճախ կարիք են զգում մի փոքրիկ նմոյշ ունենալ կասկածելի հիւսկէից կամ կիստի պարունակած հեղու-կից, մախքան վերջնական այստորոշման հանգելը: Եւ բժշկի տրամադրութեան տակ եղած միջոցներից միայն մէկը-*բիոպսիան*-է, որն կարող է վճռականապէս այստ-րոշել քաղցկեղը:

Կրծքի քաղցկեղի այստորոշում- Բիոպսիա- Կրծքա-գեղձի բիոպսիան կատարում է կամ սահմանափակ զգայազերծումից յետոյ մի խոռոչատր ասեղով նմոյշներ քաղելով մամոգրամի կամ գեր-ձայնային քննութեան մատնանշած կէտից, կամ էլ վիրահատելով կասկածելի զանգուածը շրջակայ առողջ հիւսկէի մի փոքրիկ բեկորի հետ միասին:

Բարակ խոռոչատր ասեղով հեղուկ քաշելը, ընդհան-րապէս վերապահում է շոշափեղի կիստակերպ կոշտու-թիւնների պարագային, որոնք նշմարում են մամոգրամի կամ գեր-ձայնային քննութիւններում: Հեղուկ քաշելով, դադարկում է կիստը եւ պատճառ դառնում կոշտութեան անհետացմանը: Նման ասեղով կարելի է հեղուկի հետ միատեղ նաեւ որսալ հեղուկի միջում լողացող բջիջներ եւ ուռի կարծր մասից հիւսկէի մանր բեկորներ: Բայց եթէ, յստակ այստորոշման համար չի ստացում բարարաչափով նմոյշ, ապա հարկ է, որ այդ գործը կրկնի մի այլ տեսակ ասեղով:■

Շար. 3



Կոշտութեան հատում

Մի փոքրիկ կտրածք տալով վերցում է քաղցկեղային ուռը եւ շրջակայ առողջ հիւսկէի հնարատրին չափ փոքր մաս: Չի վերցում որեւէ մաս մաշկից: Քաղցկեղը գրոհող եղած դէպքում, դուրս են բերում աւշահանգոյցները տա-լով մի առանձին կտրածք:

1. Աւշահանգոյցներ
2. Կտրածք՝ աւշահանգոյցները դուրս բերելու համար
3. Ուռ
4. Հիւսկէի հատած մաս

Կրծքագեղձի արմատական հատում (չափաւորած)

Կրծքապտուկի եւ բիոպսիայի ենթարկւած մասի շուրջը կտրածք տալով դուրս է բերում կրծքագեղձը ամբողջու-թեամբ. միեւնոյն ժամանակ դուրս են բերում անոտի աւշահանգոյցները: Չի հատում կամ դուրս բերում որեւէ մկան:

1. Աւշահանգոյցներ
2. Կտրածք
3. Հատում է կրծքապտուկը, բիոպսիայի սպին եւ մաշկի մի մաս
4. Ուռ
5. Կրծքագեղձի դուրս բերւած մաս

Մարզական

ՖՈՒՏԲՈՒԼԻ ԸՆՆՐԱԳԻՏԱՐԱՆ

ԴԻՐՁՈՐՈՇՈՒՄ. Իրաքանչիւր հանդիպումից առաջ, տեսալ մրցակցի ուժը նկատի ունենալով, մարզիչն ընտրում է խաղի տակտիկական ծրագիր, այլ խօսքով՝ նախանշում է իր առանձին սաների եւ ամբողջ թիմի գործողութիւնները: Դրա համար մարզիչն անհրաժեշտ է ճիշտ գնահատել ինչպէս իր թիմի առանձին խաղացողների, այնպէս էլ մրցակցի դրական ու բացասական կողմերը եւ ըստ այդմ մշակել խաղի տակտիկան: Մարզիչները նաեւ օգտուում են հաղորդագրական տարբեր աղբիւրներից, որոնց թիւն պէտք է դասել տպագրուած յօդածները, հարցազրույցները, մրցումների արդիւնքները, ակամատեսների պատմածը մրցակցի մարզումների եւ հանդիպումների մասին, անձամբ տեսածը, խաղերի տեսագրութիւնները: Այդ ամենից ելնելով՝ որոշում են թիմի յարձակողական եւ պաշտպանական հիմնական ուժերը, ընտրում մշակուած խաղարկումներ եւ այլն:

Առաջիկայ հանդիպման համար կատարում է դիրքատրում: Ֆուտբոլիստները ծանօթանում են խաղի ծրագրին, նշում են նրանց անելիքները: Նպատակայարմար է դիրքատրումը (15-20 կամ 30-10 րոպէ տետողութեամբ) կատարել խաղի օրը: Մարզիչը կարող է այդ նպատակով օգտուել ցուցատախտակից:

Դիրքատրման օրինակ. ա) խաղի նշանակութիւնը, բ) մրցակից թիմի բնութագիրը, կազմը, գ) մրցավարների կազմը, դ) իր թիմի կազմը, ե) պահեստայինները, զ) խաղի տակտիկական ծրագիրը, է) յանձնարարականներ առանձին խաղացողներին, ը) եղանակային պայմանները, խաղադաշտի չափերը եւ վիճակը, հանդիսականներ եւ այլն: Խաղից առաջ, որպէս կանոն, տեղի է ունենում 15 րոպէի չափ մարզանք (մարմնամարզական, թեթեւատետիկական, զնդակով վարժութիւններ, փոխանցումներ, հարւածներ դարպասին), որպէսզի Ֆուտբոլիստի օրգանիզմն առողջանայ եւ պատրաստ լինի խաղային բեռնածութեանը: Ընդմիջման ժամանակ (10 րոպէ) 3-4 րոպէ յատկացում է լիակատար հանգստին, 2-3՝ դիտողութիւններ խաղային կարգապահութեան վերաբերեալ, 2-3՝ անդրադարձ կոպիտ սխալներին: Անհրաժեշտ է նաեւ նշել յաղթանակի հասնելու ուղիները: Հեռուոր պատասխանատու մրցումների մեկնելիս՝ մասնագէտ մարզիչները հաշի են առնում նաեւ կլիմայափոխման հանգամանքը եւ անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում յարմարելու մրցավայրի կլիմային:

ԴՊՊԻՍԳ Արգելուած խթանիչ դեղամիջոցներ, որոնք առողջացնում են մարզիկի օրգանիզմը, սակայն ժամանակաւորապէս վերացնելով յոգնածութիւնը եւ առանելագոյն էներգիա առաջացնելով՝ զգալի բացասական ներգործութիւն են ունենում. նստեցնում են աշխատունակութիւնը, վատացնում քունը, քայքայում են արդային համակարգը եւ վնաս հասցնում առողջութեանը: Մրցումների ժամանակ Ֆուտբոլիստները պարբերաբար ենթարկուում են դոպինգային ստուգման, եւ արգելուած դեղամիջոց օգտագործողները կրում են համապատասխան պատիժներ:

ԴՊԻԳԱՐԵԱՆ ԱՐՄԵՆԱԿ (1924-85). Կիսապաշտպան: Տեխնիկատակտիկական լաւ պատրաստակամութեամբ, Ֆիզիկապէս կոփուած Ֆուտբոլիստ: 1949-50թթ. Երեսանի «Դինամոյի» կազմում հանդէս է եկել ԽՍՀՄ առաջնութեան բարձրագոյն խմբում: Անցկացրել է 51 խաղ, խփել 1 գոլ: Հայաստանի վաստակաւոր մար-զիչ: Աշխատել է մանկապատանեկան թիմերում:

ԴՊԻԳԱՐԵԱՆ ՅԱԿՈՒ (ծնւ. 1919թ.) Յարձակուող: Սպորտի վարպետ: Դաշտում հմտօրէն տեղաշարժուող, լաւ հարւածների տիրապետող Ֆուտբոլիստ: 1949-50թթ. Երեսանի «Դինամոյի» կազմում հանդէս է եկել ԽՍՀՄ առաջնութեան բարձրագոյն խմբում: Անցկացրել է 34 խաղ, խփել 6 գոլ: Հայաստանի վաստակաւոր մար-զիչ: Աշխատել է մանկապատանեկան թիմերում:

ԵՐԻԱԶԱՐԵԱՆ ՌՈՒԴԻԿ (ծնւ. 1944թ.) Կիսապաշտպան: Սպորտի վարպետ: Ֆիզիկապէս լաւ պատրաստուած, աշխատասէր Ֆուտբոլիստ: ԽՍՀՄ առաջնութեան բարձրագոյն խմբում հանդէս է եկել Երեսանի «Արարատ» (1966-70) եւ Դոնեցկի «Շախտեօր» (1970-71) թիմերում: «Արարատի» կազմում անցկացրել է 117 խաղ, խփել 6 գոլ: 1965թ. ԽՍՀՄ առաջնութեան առաջին խմբի մրցաշարի յաղթող եւ փոքր ոսկէ մեդալակիր:

ԵՐՈՒՊԱՅԻ ԱՌԱԶՆՈՒԹԻՒՆ. Անցկացում է 1960 թականից, չորս տարին մէկ: 1960 եւ 1964թթ. անւանում էր «Երոպայի գաւաթի խաղարկութիւն» (Անրի Դելոնէի գաւաթ), 1968-ից՝ «Երոպայի առաջնութիւն»: Աշխարհամասի խոշորագոյն մրցումն է՝ ազգային հաւաքականների մասնակցութեամբ: Դրա անցկացման գաղափարը յղացել է վարդոց: Ֆրանսիայի Ֆեդերացիայի գլխատը քարտուղար Ա. Դելոնէն դեռեւս 1927թ. այդ բովանդակութեամբ նամակով դիմել է երոպական երկրների ազգային Ֆեդերացիաներին: Սակայն միայն 30 տարի անց ՈՒԵՖԱ-ն վերջապէս համաձայնեց անցկացնել աշխարհամարտի գաւաթի խաղարկութիւն: Երոպայի գաւաթը փոխանցել է: Այն, մաքուր արծաթից (մարմարէ պատւանդանով), պատրաստել է Ֆրանսիացի ոսկերիչ եւ քանդակագործ Մ. Շոքիեօնը: Երոպայի առաջնութեանը մասնակցում են արհեստավարժ թիմեր:

ԶԱՆԱԶՆԵԱՆ ՅՈԿԱՆՆԵՍ (ծնւ. 1946թ.) Կիսապաշտպան: Միջազգային կարգի ըսպորտի վարպետ: Խաղի հմուտ կազմակերպիչ, աշխատասէր, հեռից ուժեղ եւ դիպուկ հարւածների տիրապետող Ֆուտբոլիստ: ԽՍՀՄ առաջնութեան բարձրագոյն խմբում հանդէս է եկել Երեսանի «Արարատ» (1966-75) եւ Մոսկւայի «Մպարտակ» (1976) թիմերում: Խաղացել է նաեւ Ստեփանակերտի «Բարաբա-դում»: «Արարատի» կազմում անցկացրել է 243 խաղ, խփել 56 գոլ: Օլիմպիական խաղերի բրոնզէ մեդալակիր, (1972), 1973թ. ԽՍՀՄ չեմպիոն եւ գաւաթակիր, 1971թ. առաջնութեան արծաթէ մեդալակիր: Հանդէս է եկել ԽՍՀՄ գլխատը (6 խաղ, 1 գոլ) եւ օլիմպիական (14 խաղ, 3 գոլ) հաւաքականներում: Եղել է ՀՀ երիտասարդական հաւաքականի գլխատը մարզիչ: ■



Ժամանց

ԽԱՉԲԱՌ ՀԱՄԱՐ 17

Կազմեց՝
Գագիկ Անդրեասեանը

ՇՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- 1-Թափառական-անյագ, անկուշտ:
- 2-Տարւայ ամիսներից- Կիլիկիայի հայաբրնակ մեծ քաղաքներից, որում բուրբերի միջոցով ահաւոր ջարդ տեղի ունեցաւ:
- 3-Ինչ որ երկիրն արդիւնաբերում՝ ստեղծում է- հաստ զաւազան, մահակ- ժխտական նախածանց- մարդի խաղի իսկական պիտոյքներից է:
- 4-Ճիպտո գործող- կրկնած բաղաձայն:
- 5-Հայաստանի հանրայայտ երաժշտագետներից:
- 6-Հեղուկը քամելու սարք- մուգ կարմիր- երաժշտութեան եւ տաղաչափութեան մէջ՝ ժամանակի միաւոր:
- 7-Դատարկւած, թափուր- ցալի բացազանչութիւն- իզական անուն- կրկնած ձայնաւոր:
- 8-Ցուցական դերանուն- դաւաճանելուդարկել, առաքել:
- 9-Դերանուն է- թռչունների խումբ- սնամէջ սէր:
- 10-Ապահով՝ փորձանքից ու վտանգից- կրկնած ձայնաւոր- այս երկտառը երկու անգամ կրկնելով կը դառնայ հայ երկտառարդների սիրած երգչի անունը- այժմ, հիմա:
- 11-Որի մագերն սկսել են սպիտակել- վերքի վրայ առաջացող թանձր հեղուկ պարունակող:
- 12-Իրան մեծ բան երեւակայելը, պանծալը- սիրոյ անուն:
- 13-Աստծուն նկիրւած- մէջտեղից կտորւած սիւն:
- 14-Շէնք, որտեղ կիներատոգրաֆիական պատկերներ են ցոյց տալիս- կողքին դրող:
- 15-Սալօջախ- խրխնջալ- մէկ:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1															
2															
3															
4															
5															
6															
7															
8															
9															
10															
11															
12															
13															
14															
15															

ԼՈՒԾԷՔ
ԽԱՉԲԱՌԸ
ՍՏԱՏԷ
ՆԻԵՐ

ՈՒՂՂԱՇԱՅԵԱՑ

- 1-Խորունկ քուն- ցածից՝ պատշաճաւոր, յարմար- սնամէջ կապ:
- 2-Մտերիմ, հարազատ- ինչ որ ասել չի կարելի-թել մանելու ձեռքի գործիք:
- 3-Անգոր, թոյլ- մայր բառի կրճատուած կոչական ձեւ-արեւոյտ, արեւոյտ:
- 4-Կրակի գոյն- գլանակ, պապիրոս:
- 5-Անաւարտ նետ- շարժումը՝ հոսանքը դադարեցնել այնտեղ, նոյն տեղում:
- 6-Առարկաների ընդհարումից խուլ ձայն առաջ գալ- թագաւոր (տառապխալով):
- 7-Հայաստանի յայտնի արձակագիրներից (1919-1983), որը ծնել է Թեհրանում եւ ապա ներգաղթել է Հայաստան- դալարութիւնն անց կացած, կոշտացած:
- 8-Մեղրամտից պատրաստուած մեծ մում, որ գործ են ածում եկեղեցում- բարի, նպաստաւոր- մարմնի արիւնի շրջանադարձութեան իսկական մասնիկը:
- 9-Մակերեսի չափման միաւոր- խառն արտ- նոտաներից- նետաձգութեան նպատակակէտ, որին նետով նշան են առնում:
- 10-Շատ սուր բերանով դանակ, որով սափրում են երեսի եւ գլխի մագերը- մութ, մթազին, կեղտոտ-դար առանց ա-ի:
- 11-Ժխտական նախածանց- դերանուն է- արական անուն- ցածից մակերեսի չափման միաւոր:
- 12-Հէնց «այդ» է- մի տեսակ կտոր- լսել մէկի խօսքին, հպատակել:
- 13-Ձերմութեան ազդեցութեամբ, հեղուկը փոխում է դրան- կրկնած ձայնաւոր- անորոշ տեսակի կարծ խոտ, մանր տերեւներով, որ գործ են ածում վերքեր բժշկելու համար:
- 14-Անսպասելի, յանկարծական-մի տեսակ պտուղ- տարի:
- 15-Տուրք- անաւարտ տաղ- օրէնքի պաշտպանութիւն ապօրինութեան դէմ- Հայաստանի հին մայրաքաղաքներից:

Խաչբառ համար 16-ի
լուծուած տարբերակը
տեսնել՝ էջ 17-ում:

Մանկական

ԱՍՏԻԱՅ ԸԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՊԱՐԳԵԷՅ ԱՄԵՆԱԹԱՆԿԱԳԻՆԸ՝ ԸԱՅ ՄԱՅՐԸ

ԲՂԱՆՆՅՕԱՆ ՍՅՄԻՆՉԻՍՅԱ



Մայրիկների տունը

-Մայրիկների տունն է այսօր,
Ապրիլ եօթը հանդիսատր.
Մեր կարկաչուն ծայնով հնչուն
Մայրիկներին ողջո՛յն, ողջո՛յն:
-Շատ են սիրում իմ մայրիկին,
Արթնանում են ժամանակին,
Մաքրում տունը, դպրոց գնում,
Մայրս ինձնից գոհ է մնում:
-Մօրից քաղցր, մօրից քնքուշ,
Կա՞յ ուրիշ բառ անուշ-քնքուշ,
Ուր էլ լինենք, ինչ էլ դառնանք,
Մայրիկներին չմոռանանք:
Մեր սիրելի մայրերը միշտ
Թող չունենան կարիք ու վիշտ,
Զաւակներով իրենց բոլոր՝
Ապրեն ուրախ ու բախտատր:

Առաջադրանք

- 1-Ի՞նչպէս էք շնորհատրելու Ձեր մայրիկին:
- 2-Պատմի՛ր քո տատիկի մասին:

Մանուշակ

Կապոյտ գլխով, կանաչ ոտով
Ես ծաղիկ եմ անուշ հոտով,
Թէև տունկս փոքրիկ է, ցած,
Արօտներում միշտ քաք կացած,
Բայց իմ փունջը իբրև մի գարդ,
Տեսնում է միշտ ամէն մի մարդ:
Ես եմ սիրուն գարնան գուշակ,
Իմ անունն է մանուշակ:



Շուտասելուկ

Կար չկար մի գաճաճ արջ կար:
Այդ գաճաճ արջի աջ ոտքը չկար:

Ապրիլ եօթ

Ապրիլ եօթը մայրերի տօն է:

Նախքան Հայաստանի անկախութիւնը, մարտ 8-ը կանանց, գեղեցկութեան եւ մայրերի օր էր, բայց Հայաստանի անկախութիւնից յետոյ այդ օրը փոխւեց Ապրիլ եօթի, քանի որ այդ օրը Գաբրիէլ հրեշտակը կոյս Մարիամին աւետեց, որ պիտ յղանայ Ս. հոգու շնորհիւ:

Միրելի երեխաներ յիշէ՛ք որ շնորհատրէք Ձեր մայրիկներին, տատիկներին:

Մօրս ձեռքերը

Այնպէս մաքուր են,
Կեանքի աղբիւր են
Մօրս ձեռքերը:
Քնքշանք¹ ու բոյր են
Եւ հաց ու ջուր են
Մօրս ձեռքերը:

Արտի պէս տաք են,
Միրոյ կրակ են
Մօրս ձեռքերը:
Վիշտը² վանող³ են
Ու տուն կանչող են
Մօրս ձեռքերը:

- 1- քնքշանք = քնքուշ,
- 2- Վիշտ = ցաւ, տխրութիւն
- 3- Վանող = հեռացնող

Այս ծաղրանկարները կազմել են հայերէն տառերով:
Կարող էք գտնելով դրանք, ստանալ հայկական անձնանուններ:



տվկոցոդ



եմսաշ



ցոնսմոի

Հանելուկ

Նոյնն են միայն անունով,
Նոյնն են միայն գրութեամբ:
Մէկն ապրում է գրքերում,
Միւրը գրկում բնութեան:
Մէկն աննշան մի նշան,
Միւրը՝ շունչ կենդանի,
Հօրութեամբ, մեծութեամբ
Զարդը անհուն ովկիանի:



տղի

Կազմեց՝ Արմինե Բարումեանը

Երիտասարդի համար

Երկրի ձեւի պատկերացումը հին ժողովուրդների մօտ

Կամսար Աւետիսեան

Ներկայումս մեզ ճշգրիտ կերպով յայտնի են երկրի թէ ձեւը եւ թէ մեծութիւնը: Իւրաքանչիւր դարոցական գիտի, որ երկիրը գնդաձեւ է եւ կատարում է իր պտոյտը Արեգակի շուրջը տիեզերական ընդարձակութիւնում: Նրա տրամագիծը հաւասար է 12 740 կիլոմետրի, շառաւիղը՝ 6.370 կիլոմետրի, իսկ շրջագիծը՝ հասարակածով՝ 40.000 կիլոմետր է: Յայտնի է նաեւ, որ երկրի մակերեսը գրաւում է 510 միլիոն քառակուսի կիլոմետր: Բայց հին ժողովուրդները երկրի թէ ձեւի, թէ պտոյտի մասին նման ճշգրիտ եւ գիտական պատկերացում չունէին: Բարեւոնացիները, որ բնակւում էին Միջագետքում հեռաւոր երկրների, ինչպէս նաեւ մեր մոլորակի մասին շատ բան չգիտէին: Նրանք կարծում էին, թէ երկիրը աղեղի ձեւ ունի եւ բոլոր կողմերից շրջապատւած է ջրով: Նրանք ասում էին, որ եթէ շատ հեռու գնան, կը հասնեն մի մեծ գետի, որը կոչւում է «ովկիանոս»: Նրանք հաւատում էին, որ հենց ովկիանոսն էլ շրջափակւում է երկիրը:



Երկրի մասին այլ պատկերացում ունէին հնդիկները: Նրանք կարծում էին թէ երկիրը յենւում է չորս հսկայ փղերի մէջքին: Իսկ այդ փղերն իրենց հերթին կանգնած են հսկայ կրիայի մէջքին, թէ ինչի վրայ է կանգնած կրիան, այդ հարցին նրանք դժարաբանում էին պատասխանել:

Եգիպտացիները կարծում էին, թէ աշխարհը գոյացել է ջրից: Սկզբում երկիրը եւ երկինքը կպած են եղել իրար: Այնուհետեւ օդը թափանցել է նրանց միջեւ եւ անջատել: Դրանից յետոյ երկինքը բարձրացել է վերեւ, եւ արեգակին հնարաւորութիւն է տւել սկսելու իր օրական ճամապարհորդութիւնը երկնքով: Վերջապէս ըստ հին ժողովուրդների պատկերացման, երկիրը յենւում է երեք հսկայ կէտերի վրայ, որոնք իբր լողում են անեզր համաշխարհային ովկիանոսում: Հետեւապէս, այս կէտերը եղել են հիմքերի հիմքը, երկրագնդի յենարանը: Ի դէպ «երեք կէտ» պատկերաւոր արտայայտութիւնը գործածւում է մի որեւիցէ բանի երեք հիմք, երեք սեան իմաստով:

Հետաքրքիր է նաեւ այն, թէ ինչ բացատրութիւն էին տալիս արեգակի ծագման եւ մայրամուտի մասին: Հին յունական դիցաբանութեան մէջ կայ այսպիսի մի պատմութիւն: Հերոսներից մէկն ամէն առաւօտ արեգակի ոսկեայ կառքը բերում է արեւելքից եւ զգուշութեամբ ձիերը վարելով երկնքի վրայով, ցերեկայ ընթացքում տանում է միւս կողմը՝ արեւմուտք: Եւ այսպէս կրկնում է ամէն առաւօտ:

Հետաքրքիր է այն, որ մարդիկ, երկար ժամանակ երկիրը հարթ էին պատկերացնում: Ժամանակի ընթացքում մարդկային բանականութիւնը կարողացաւ երկրի իսկական ձեւը պատկերացնել: Ճիշտ է, այդ բանի համար պահանջւեցին շատ եւ շատ դարեր: Բայց եւ այնպէս ճշմարտութիւնը բացայայտեց սերունդների ջանադիր աշխատանքի շնորհիւ: Յատկապէս, Աշխարհագրական Մեծ

յայտնագործումների ժամանակաշրջանում, որն իրականում սկսեց տասնհինգերորդ դարի վերջին:

Երկրի գնդաձեւութեան մասին գիտելու անուանի ծովագնաց Քրիստափոր Կոլումբոսը: Երբ իսպանական Խուրտալում քննուում էր նրա առաջադրած՝ արեւմտեան կողմից Հնդկաստան հասնելու նախագիծը, որը իրականում հիմնւած էր երկրի գնդաձեւութեան վրայ, Խուրտալի անդամները հեզմանքով հարցնում էին Կոլումբոսին. «Եթէ երկիրը գունդ է, ապա ինչպէս քո նաւերը հայրենիք կը վերադառնան, երբ նրանք գնդով ցած կիջնեն»: Ինչպէս յայտնի է Կոլումբոսը ոչ թէ մէկ, այլ չորս անգամ ճանապարհորդութիւն կատարեց դէպի կարծեցեալ Հնդկաստան (ներկայիս Վեստ-Ինդիա) եւ փորձով ապացուցեց իր ասածի ճշմարտութիւնը:

Երկրի գնդաձեւութեան գործնական ապացոյցի պատիւը պատկանում է Մագելանին: Նրա արշաւախումբը կատարեց առաջին շուրջերկրեայ ճանապարհորդութիւնը, որը տակնուվրայ արեց տիեզերքի մասին այդ ժամանակայ գերիշխող պատկերացումները: Մագելանի արշաւախումբը ժխտեց դեռ անտիկ աշխարհից եկած այն տեսակէտը, որ իբր թէ ցամաքն աւելի մեծ տարածութիւն է գրաւում քան ջուրը: Հենց Մագելանի կողմից յայտնաբերւած Խաղաղ ովկիանոսը աւելի շատ տարածութիւն է բռնում, քան բոլոր ցամաքները միասին:

Արշաւախումբը բերել էր մի այլ լուր՝ որ արեւը տարբեր տեղերում, տարբեր ժամանակներ է ծագում, որ երկրագնդի վրայ իւրաքանչիւր տեղ ունի իր կէտօրը:

Այսպիսով մեզանից 452 տարի առաջ ճիշտ հիմքի վրայ դրեց երկրի գնդաձեւութեան փաստը:

Մեր օրերում, երբ աշխարհագրութեան դասին պէտք է լինում աշակերտներին բացատրել երկրի գնդաձեւութիւնը, դրա առաջին ապացոյց յիշատակում են Մագելանի շուրջերկրեայ ճանապարհորդութիւնը:

Մեր այսօրայ պատկերացումը այն մասին, որ երկիրը գնդաձեւ է եւ կատարում է իր լրիւ պտոյտը Արեգակի շուրջը 365 օրում եւ 6 ժամում հանդիսանում է մարդկային մտքի ու հանճարի դարաւոր զարգացման արդիւնք: Երկրի գնդաձեւութեան փաստի հետ փոխուեց նաեւ մարդկանց պատկերացումը աշխարհի մասին:

«Աշխարհը-գրում է Էնգելսը,- միանգամից մեծացել էր գրեթէ տասն անգամ, մի կիսագնդի մի քառորդի փոխարէն այժմ ամբողջ երկրագունդն էր արեւմտեան եւրոպացիների աչքերի առաջ, որոնք շտապում էին տիրել մնացած եօթ ութերորդին: Եւ ինչպէս որ ընկան հայրենիքի մեղ սահմանները, այնպէս էլ անհետացան միջնադարեան արանդական մտածելակերպի հազարամեայ շրջանակները: Մարդու ներքին ու արտաքին հայեացքի առաջ բացուեց մի անսահման աւելի լայն հորիզոն»:■

Նորամուտների փալուստը բարի

Խելիա Աւետեան
մայրը՝ Անիտա
հայրը՝ Յովիկ